# «ԱՇԽԱՐՀԱՑՈՅՑ» Է ԴԱՐԻ ԱՆԱՆՈՒՆԻ.
## ԳԻՏԱ-ՔՆՆԱԿԱՆ ԲՆԱԳԻՐ

Աշխատանքը նուիրում եմ իմ երեք
ուսուցիչներից մէկի՝ մեծավաստակ հայագէտ
Բաբկէն Յարութիւնեանի լուսաւոր
յիշատակին:

Ալեքսան Յակոբեան

*«Աշխարհացոյց»-ի ամբողջական գիտա-քննական բնագրի կազմման առիթով[1] վերջին տարիներին մեր կողմից կատարուած վերլուծութիւնը թոյլ է տալիս մտածել, որ հայկական վաղ միջնադարի այդ բացառիկ աշխարհագրական երկի ստեղծման գաղափարն ու գաղափարախօսութիւնն, ըստ ամենայնի, ուղղակիօրէն ներշնչուած են 610-ական թթ. առաջին կէսում Խոսրով Բ Ապրուէզ Սասանեան արքայի տիրապետութեան տակ վերամիաւորուած Մեծ Հայք աշխարհ-շահրում վարչական սպասելի բարեփոխման (ռէֆորմի), մասնաւորապէս՝ «Հայոց իշխանի» ինստիտուտի հաստատման հեռանկարից եւ իրողութիւնից: Մինչ այս տեսակէտի փաստարկումներին անցնելը համառօտ յիշենք (յղելով դեռեւս 1940 թ. Աշ. Աբրահամեանի կատարած ամփոփմանը), որ խնդրոյ առարկայ երկի ստեղծման «ժամանակի վերաբերեալ բանասէրները յայտնել են իրարից տարբեր չորս հիմնական կարծիք. 1) Մխիթարեաններն «Աշխարհացոյցը» համարել են Մովսէս Խորենացու աշխատութիւն՝ Խորենացուն համարելով Ե դարի հեղինակ. 2) Սեն-Մարտէնն «Աշխարհացոյցը» համարել է կեղծ (սուտ) Մովսէսի գործ՝ գրուած Թ դ. վերջերում կամ Ժ դարի սկզբներում. 3) ակադ. Յ. Մանանդեանն «Աշխարհացոյցը» համարել է Խորենացու աշխատութիւն՝ Խորենացուն բերելով Թ դար. եւ, վերջապէս, պրոֆ. Ք. Պատկանեանն «Աշխարհացոյց»-ը համարել է Անանիա Շիրակացու գործ՝ գրուած Է դարում»[2]: Նշուածներին յետագայ տասնամեակներին աւելացել է միայն ակադ. Ս. Երեմեանի հիմնաւոր տեսակէտը, ըստ որի փաստարկման՝ երկը կարող էր գրուել 618 թուականից ոչ ուշ, քանի որ, ըստ Սեբէոսի եւ շինարարական արձանագրութեան՝ այդ տարում է Վաղարշապատում կառուցուել (կամ գոնէ՝ հիմնադրուել) Ս. Հռիփսիմէի եկեղեցին, իսկ «Աշխարհացոյց»-ում նրա փոխարէն դեռեւս խօսւում է «մարտիրոսուհիների մատուռների» մասին. ճիշտ է՝ ուսումնասիրողն, ի վերջոյ, նախընտրում է 610 թ. նախօրեակը՝ համարելով, որ Վիրքի սրբատեղիների մասին հեղինակի դրական նկարագրութիւնն աւելի հաւանական է վերագրել Հայ եւ Վրաց եկեղեցիների բաժանմանը նախորդած տարիներին[3]:*

1 Նախորդ հրատարակութիւնները տե՛ս *Սրբոյ հօրն մերոյ* ***Մովսէսի Խորենացւոյ*** *Մատենագրութիւնք*, Վենետիկ–Ս. Ղազար, 1848; *Армянская география VII века по Р. Х.*, Текст и перевод издал **К. П. Патканов**, СПб., 1877; *Աշխարհացոյց* ***Մովսեսի Խորենացւոյ***, Յաւելուածովք նախնեաց [հրատ. **Հ. Ա. Սուքրեան**], Վենետիկ–Ս. Ղազար, 1881; **Ա. Գ. Աբրահամեան**, Անանիա Շիրակացու մատենագրութիւնը, Եր., 1944; **Ս. Տ. Երեմեան**, *«Աշխարհացոյց»-ի սկզբնական բնագրի վերականգնման փորձ*, – ՊԲՀ, 1972, հմր 4, էջ 209-230; 1973, հմր 1, էջ 238-252; 1973, հմր 2, էջ 261-274:

2 **Ա. Աբրահամեան**, *Խորենացուն վերագրուող «Աշխարհացոյց»-ի հեղինակի հարցի շուրջը*, Եր., 1940, էջ 48:

3 **Ս. Տ. Երեմեան**, *Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի (Փորձ VII դարի հայկական քարտէզի վերակազմութեան ժամանակակից քարտէզա-*

Արդ, ինչպէս յայտնի է, 610 թ. Բիւզանդիայի Փոկաս կայսրն սպանուեց իր ապստամբած Հերակլ զօրավարի կողմից, որը նոր կայսր հռչակուեց եւ գահին տիրեց երեք տասնամեակ (610-641): Նրա իշխանութեան առաջին մէկուկէս տասնամեակները եղան կայսրութեան էական թուլացման շրջանը: Օգտուելով գլխաւոր հակառակորդի խառնակ վիճակից՝ Իրանի արքայից արքայ Խոսրով Ապրուէզի յաղթական բանակները շատ արագ գրաւեցին Բիւզանդիայի գրեթէ բոլոր արեւելեան պրովինցիաները՝ 612-ին՝ Փոքր Ասիայի մեծ մասը, 614-ին՝ Պաղեստինը, 617-ին՝ Եգիպտոսը[1]: Հէնց այդ պատմական պահին տեղի ունեցաւ 385/387 եւ 591 թթ. բաժանումներով երկատուած Հայաստանի (Մեծ Հայքի) երկու մասերի վերամիաւորումը Սասանեանների տէրութեան կազմում:

Ներկայումս լիովին հնարաւոր է թւում փաստարկել, որ մեզ չխմբագրուած-չհամառօտուած տարբերակով միայն մէկ ձեռագրում հասած (Վենետիկի թիւ 1245. ընդօրինակուած է Հայոց ՌԾԳ – 1604 թ., ցաւալիօրէն, խիստ անուշադիր գրիչ Ստեփաննոսի կողմից՝ «Աշխարհացոյց Մովսէսի Խորենացոյ ասացեալ» վերտառութեամբ, թ. 1ա-38բ[2]) այդ աշխարհագրական երկը (նրա շրջանառու՝ «ընդարձակ խմբագրութիւն» անուանումը չի կարող ճշգրիտ համարուել՝ հէնց նշուած պատճառով) սկզբնապէս շարադրուել է նախ եւ առաջ՝ իբրեւ մի յատուկ ծրագրային փաստաթուղթ-տեղեկատու՝ Տիզբոնում 615/616 թ. կայացած[3] (այլ հաշուարկով՝ 617/618-ին[4]), այսպէս կոչուած, «Պարսից ժողովին» մասնակցող հայկական «պատուիրակութեան» կողմից օգտագործուելու նպատակով: Մօտաւորապէս 642 թ. իր աշխատանքն սկսած եւ 659 թ. առաջին կէսին գրիչը վայր դրած Սեբէոս պատմիչի[5] ուղիղ վկայութեամբ՝ ժողովին մեկնողներն իրենց հետ էին վերցրել նման մի նիւթ. «Ունէին պատրաստական անդ ընդ ինքեանս զգիր սրբոյն Գրիգորի»[6]: Միւս զուգահեռը «Կնիք հաւատոյ» ժողովածոն է, որի ստեղծումը եւս մասնագէտները կապում են Կոմիտաս կաթողիկոսի եւ «Պարսից ժողովի» համատեքստի հետ[7]: Սեբէոսի ունեցած տեղեկութեան համաձայն՝ Սմբատ Բագրատունու եւ անձամբ Խոսրով Ապրուէզ արքայի գլխաւորութեամբ անցկացուած այդ «ժողովում» քննարկուել է լոկ դաւանական այն խնդիրը, որի արդիւնքում Հայոց եկեղեցու դաւանանքը հաստատուել է իբրեւ Սասանեան տէրութեան քրիստոնեայ համայնքների համար միակ ընդունելին (ըստ առկայ բնագրի՝ «Յորոյ

---

*գրական հիմքի վրայ)*, Եր., 1963: Գրականութեան վերջին հիմնարար ամփոփումը տե՛ս **Բ. Յ. Յարութիւնեան**, *Մեծ Հայքի վարչա-քաղաքական բաժանման համակարգն ըստ «Աշխարհացոյց»-ի*, մաս Ա, Եր., 2001:

1 Տե՛ս **Թ. Նէօլդէքէ**, *Պատմութիւն Սասանեան տէրութեան*, Թարգմ. **Ն. Քարամեան**, Վաղարշապատ–Ս. Էջմիածին, 1896, էջ 76-78; *История Византии*, т. I, Москва, 1970, էջ 364-366:

2 Ձեռագրի նկարագրութիւնը տե՛ս *Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց մատենադարանին Մխիթարեանց ի Վենետիկ*, հտ. Բ, Յօրինեց **Հ. Բ. Վ. Սարգիսեան**, Վենետիկ–Ս. Ղազար, 1924, էջ 811-818:

3 Հմմտ. **Է. Լ. Դանիէլեան**, *Հայ եկեղեցու նկատմամբ Խոսրով Փարուէզի վարած քաղաքականութիւնը*, – ՊԲՀ, 1981, հմր 4, էջ 197:

4 Տե՛ս **M. Van Esbroeck**, *L'encyclique de Komitas et la réponse de Mar Maroutha (617)*, – "Oriens Christianus", 85, էջ 162-175:

5 Տե՛ս **Ա. Յակոբեան**, *Սեբիոսի Պատմութեան հատուածաբաժանման խնդիրը եւ Ջուարթնոցի տաճարի կառուցման մասին գլուխը*, – «Հանդէս ամսօրեայ», ՃԺԹ տարի, Վիեննա–Եր., 2005, էջ 213-270:

6 Տե՛ս ***Սեբէոսի եպիսկոպոսի*** *Պատմութիւն*, Չորրորդ տպագրութիւն, Բաղդատութեամբ ձեռագրաց, հանդերձ առաջաբանիւ եւ ծանօթութեամբք ի ձեռն **Ստ. Մալխասեանց**, Եր., 1939, էջ 124; *Պատմութիւն* ***Սեբէոսի***, Աշխատասիրութեամբ **Գ. Աբգարեանի**, Եր., 1979, էջ 170:

7 *Կնիք հաւատոյ ընդհանուր սուրբ եկեղեցւոյ... յաւուրս Կոմիտաս կաթուղիկոսի համահաւաքեալ*, Հրատ. **Կարապետ եպ.**, Վաղարշապատ, 1914; **Կոմիտաս կաթողիկոս**, *Կնիք հաւատոյ*, – «Մատենագիրք Հայոց», հտ. Դ, Է դար, Անթիլիաս, 2005; **M. Van Esbroeck**, *L'encyclique de Komitas et la réponse de Mar Maroutha*, էջ 162-175:

վերայ հրաման ետ արքայ Խոսրով, եթէ ամենայն քրիստոնեայք, որ ընդ իմով իշխանութեամբս են՝ հաւատ զՀայոցն կալցին»): Սակայն լրացուցիչ աղբիւրագիտական նիւթի համադրումը թոյլ է տալիս մտածել, որ նոյն ժողովում կամ աւելի ճիշտ՝ գոնէ նրա համատեքստում, ըստ ամենայնի, քննարկուել ու լուծում են ստացել նաեւ տարածքային ահռելի ձեռքբերումներ ունեցած Իրանական տէրութեան համար կարեւորագոյն այլ պետական, վարչա-քաղաքական խնդիրներ:

Ըստ Ժ դարի պատմիչ Մովսէս Դասխուրանցու «Պատմութիւն Աղուանից»-ում (գրուած՝ 982-988 թթ. միջեւ[1]) պահպանուած մի քանի ուշագրաւ տեղեկութիւնների՝ Աղուանից աշխարհի «առաջին իշխան» Վարազ Գրիգորը Վիրոյ Աղուանից կաթողիկոսի (596-629) խնդրանքով էր Խոսրով արքայի կողմից նշանակուել իր պաշտօնում եւ «մկրտութիւն» էր ստացել Վիրոյից: Հմմտ. բնագրերը. «Վարդ ծնանի զՎարազման եւ զՇուշիկ տիկին եւ զՎարազ Գրիգոր՝ առաջին իշխանն Աղուանից, որ առ [ձեռ. bl էառ] զմկրտութիւն ի Վիրոյէ՝ Աղուանից կաթողիկոսէ»; «Այս Վարազ Տրդատ ի Միհրական տոհմէ էր, որք զԱղուանս ժառանգեցին որդի ի հօրէ առնլով: Սա ութերորդ էր ի Վարազ Գրիգորէ՝ առաջին իշխանէն Աղուանից»; «Տէր Վիրոյ, ամս ԼԴ... սա խնդրեաց ի Խոսրովայ արքայէ գրել պատիւ Գարդմանայ տէր եւ իշխան [ձեռ. a իշխանաց] Աղուանից ի վերայ թղթոց «առ կուսակալս աշխարհիս», զոր եւ դեռեւս գրեն»[2]:

Արդ՝ Վիրոյ կաթողիկոսը, որը 630-632 թթ. միջակայքում Անանուն Կաղանկատուացու կողմից շարադրուած եւ Մովսէս Դասխուրանցու կողմից գրեթէ բառացի արտագրուած «Վիրոյ կաթողիկոսի պատմութիւն» կոչուող միաբնակ երկի վկայութիւններով՝ իր իշխանութեան առաջին տարիներից (ճշգրիտ՝ 602-ից) մինչեւ նախավերջին տարին (628 թ.) ապստամբներին սատարելու կասկածով Տիզբոնում էր պահւում պատուաւոր աքսորեալի կարգավիճակով[3], ըստ Սեբէոսի՝ 610-ական թթ. կէսերին Տիզբոնի «Պարսից ժողովի» մասնակիցներից էր, ընդ որում՝ երկաբնակ, քաղկեդոնական դաւանանքով: Սեբէոսի այդ հատուածն է. «Իսկ որք զՔաղկեդոնին՝ զՎիրոյ զԱղուանից կաթուղիկոսն, եւ այլ բազում եպիսկոպոսունք ի Յունաց կողմանէ, եւ իշխանք, որք եկեալ էին ի ծառայութիւն Պարսից թագաւորին»): Նշելի է, որ պատմիչի երկի հեղինակային սկզբնագրի վերականգնման համար նշանակութիւն ունեցող Ա գրչագիրը Վիրոյի փոխարէն տալիս է «զվիրս» ընթերցումը, իսկ Երից. պատառիկը եւ Միհրդ. գրչագիրը՝ «զՎրաց»: Սակայն եթէ դրա հիման վրայ մտածենք, թէ Սեբէոսը չի նշել Վիրոյի անունը (այլ՝ Վրաց, չգիտես ինչու ընկած եւ-ով), ապա միեւնոյնն է՝ ժողովին մասնակցած Աղուանից կաթողիկոսը (այսպիսով՝ Վրաց կաթողիկոսի կողքին) այդ տարիներին եղել է հէնց նա:

Ըստ Անանիա Մոկացու եւ Արսէն Սափարացու (Ժ դար)՝ Է դ. առաջին տասնամեակի եկեղեցական բաժանումներից յետոյ, երբ յուսահատուած Աբրահամ Աղբաթանեցին 609 թ. ի վերջոյ նզովք ուղղեց Վրաց կաթողիկոս Կիւրիոնին եւ «Աղուանիցին» (այսինքն՝ Վիրոյին)[4], Աղուանից

---

1 Տե՛ս **А. А. Акопян**, *Албания-Алуанк в греко-латинских и древнеармянских источниках*, Ер., 1987, էջ 212-223:

2 Տե՛ս **Մովսէս Կաղանկատուացի**, *Պատմութիւն Աղուանից աշխարհի*, Քննական բնագիրը եւ ներածութիւնը **Վ. Առաքելեանի**, Եր., 1983, գլ. Բ.ժէ, էջ 172; Գ.ժթ /ի/, էջ 326; Գ.իգ /իդ/, էջ 343:

3 Վիրոյի «ապստամբութեան» մասին առաւել մանրամասն տե՛ս **Մ. եպ. Բարխուտարեանց**, *Պատմութիւն Աղուանից*, հտ. Ա, Թիֆլիս, 1902, էջ 92-93; **Հ. Ն. Ակինեան**, *Մովսէս Դասխուրանցի (կոչուած Կաղանկատուացի) եւ իր Պատմութիւն Աղուանից*, Վիեննա, 1970, էջ 197-200; **А. А. Акопян**, *Албания-Алуанк...*, էջ 191-192:

4 *Գիրք թղթոց*, Տփխիս, 1901, էջ 193-194; **Աբրահամ Աղբաթանեցի**, *Թուղթք* [6], Հրատ. **Պ. Մուրադեան, Ա. Յակոբեան** – «Մատենագիրք Հայոց», հտ. Դ, Է դար, Անթիլիաս, 2005, էջ 19-20:

եկեղեցին միաբնակութեան էր վերադարձրել Հայոց կաթողիկոս Կոմիտաս Աղցեցին (615-628)[1], ով եւս «Պարսից ժողովի» մասնակիցներից էր՝ դեռ եպիսկոպոսի կարգավիճակով: Նշուած տեղեկութիւնները համադրելով՝ հաւանական է թւում մտածել, որ այսրկովկասեան երկրների որոշակի ինքնավարութիւնը խորհրդանշող ոչ միայն Աղուանից, այլեւ Հայոց եւ Վրաց «իշխան»-ների հաստատութիւնները (ինստիտուտները) հիմնադրուել են (անկախ նախորդող դարաշրջանի նմանատիպ, բայց աւելի թոյլ հաստատութիւններից) հէնց «Պարսից ժողովում» կամ նրա համատեքստում: Իսկ այդ դէպքում պէտք է հասկանալի լինի, որ նշուած ինքնավարական հաստատութիւնները ենթադրում էին ոչ միայն Սասանեան կենտրոնական մարմինների կողմից Հայոց, Վրաց եւ Աղուանից «իշխան»-ների իրաւասութիւնների յստակ սահմանում, այլեւ այն վարչատարածքների ճշգրիտ առանձնացում, որտեղ այդ իրաւասութիւնները պիտի գործառուէին:

Եւ ահա տեսնում ենք, որ մեր «Աշխարհացոյց»-ը հէնց փորձում է սահմանել տուեալ տարածքները, ընդ որում՝ բաւականաչափ յստակ. ընդ սմին՝ Հայք աշխարհ-շահրի դէպքում Է դարի հայ աշխարհագէտը դա անում է 385/387 եւ 591 թթ. բաժանագծերի բացարձակ անտեսումով (թէպէտեւ երկի բնագիրը բազմազան ու կարեւոր տեղեկութիւններ է հաղորդում այդ բաժանագծերի մասին): Ուշադրութիւն դարձնենք, որ «Աշխարհացոյց»-ում յատուկ նշւում են նաեւ, նորօրեայ եզրոյթով ասած՝ «վիճելի» հատուածները («որ ի Հայոց հանեալ են» կամ «ի Հայոց առեալ են» բառերով)՝ Գուգարք նահանգի գաւառները՝ Վիրք-Վարջան աշխարհ-շահրի դէպքում, Արցախի եւ Ուտիքի գաւառները՝ Աղուանքի դէպքում, եւ Կասպք-Փայտակարան նահանգը՝ Ատրպատական աշխարհ-շահրի դէպքում:

Փակագծում նկատենք, որ «Պարսից ժողովի» հայկական պատուիրակութեան հէնց այս տարածքային «յաւակնութիւնները», ի տարբերութիւն խմբի մնացեալ նպատակադրումների, մնացին Տիզբոնի կենտրոնական իշխանութեան կողմից «չբաւարարուած»: Այդպէս՝ «Հայոց իշխան»-ը, որի լիազօրութիւնների ճանաչումը շուտով որդեգրուեց Բիւզանդիայի, ապա նաեւ Արաբական խալիփայութեան կողմից, իրաւասութիւններ չստացաւ Գուգարք, Արցախ, Ուտիք եւ Փայտակարան նահանգների նկատմամբ, եւ դա շարունակուեց ընդհուպ մինչեւ Աբբասեանների կողմից «Արմինիայի» իշխանաց իշխանի հաստատութեան սահմանումը Թ դարի առաջին կէսում, որն, ի դէպ, բաւականին արագ վերաճեց թագաւորական իշխանութեան. ընդ սմին Բագրատունի թագաւորները, ովքեր շատ արագ գիջեցին իրենց գերիշխանութիւնը «Արմինիայի» մաս կազմող բուն Վիրքի եւ բուն Աղուանքի նկատմամբ (պաշտօնական արձանագրումը տե՛ս գոնէ Կոստանդին Ծիրանածին կայսեր մօտ), ամենեւին բաց չթողեցին ստեղծուած պատեհութիւնը՝ վերը նշուած ծայրամասային նահանգները միասնական հայկական պետութեան կազմում «վերամիաւորելու» հարցում (որն, ըստ Կ. Իւզբաշեանի դիպուկ դիտարկման, ոչ պատահականօրէն էր վերստին ստացել «Մեծ Հայք» պաշտօնական անուանումը[2]):

«Աշխարհացոյց»-ի ստեղծումը 610-ական թթ. երկրորդ կէսին վերագրելով (թերեւս՝ մինչեւ 618 թ., երբ կառուցուեց Վաղարշապատի Ս. Հռիփսիմէի եկեղեցին, որի փոխարէն երկը դեռեւս նշում է «մարտիրոսուհու մատուռ»), գոնէ իբրեւ վարկած՝ հնարաւոր է առաջ քաշել պատմական երկու հետաքրքրական իրողութեան վերա-

1 *Տեառն* ***Անանիայի Հայոց կաթողիկոսի*** *Յաղագս ապստամբութեան տանն Աղուանից...*, – «Արարատ», 1897, էջ 137; **Լ. Մելիքսեթ-Բէկ**, *Վրաց աղբիւրները Հայաստանի եւ հայերի մասին*, հտ. Ա (Ե-ԺԲ դար), Եր., 1934, էջ 37-38:

2 Տե՛ս **К. Н. Юзбашян**, *Армянские государства эпохи Багратидов и Византия IX-XI вв.*, Москва, 1988, էջ 81:

բերող խնդիրների նորովի քննարկման անհրաժեշտութեան հարցը: Դրանք են.

ա) Արդեօ՞ք հէնց Սմբատ Բագրատունին չէր «Պարսից ժողովից» յետոյ դարձել առաջին «Հայոց իշխան»-ը (ինչպէս Վարազ-Գրիգորն էր դարձել «առաջին Աղուանից իշխան»-ը Վիրոյի միջնորդութեամբ, ով այլ յարմար պահ չէր կարող ունենալ արքայի առջեւ նման միջնորդութիւն անելու, քան «Պարսից ժողովն» էր): Բանն այն է, որ գրականութեան մէջ (Եր. Տէր-Մինասեան եւ ուրիշներ) հիմնաւոր փաստարկուած է համարւում այդ պաշտօնում Սմբատի չլինելը, սակայն՝ Հայ եւ Վրաց եկեղեցիների բաժանման տարիներին՝ 607-609 թթ., երբ նա «Վրկանի մարզպան» էր: Իսկ 610-ական թթ. կէսերին քաղաքական լրջագոյն փոփոխութիւններ էին տեղի ունեցել, եւ «Վրկանի մարզպանի» պաշտօնն էլ, հաւանաբար, ցմահ չէր: Նկատենք, որ Սեբէոսը եւ աւելի ուշ աղբիւրներ ուղղակի նշում ունեն Սմբատի որդու՝ Վարազտիրոց Բագրատունու կողմից Հայոց իշխանի պաշտօնն՝ իբրեւ «ամենից արժանաւոր» թեկնածու ստանձնելու մասին, իսկ այդ «արժանաւորութեան» մէջ հնարաւոր է ենթադրել հէնց ինչ-որ իմաստով ժառանգականութեան գործօնը: Ուշադրութեան առնենք նաեւ Յովհան Մամիկոնեանի պատումը «արժանաւոր» «Հայոց իշխան» Տիրանի մասին[1], որպիսի անուան տակ, մեր կարծիքով, ընկալելի է Վարազտիրոցը (հմմտ. Տիրան - Տիրոց):

բ) Արդեօ՞ք «Պարսից ժողովի» համատեքստում միաբնակութեանը չէր վերադարձուել նաեւ Վրաց եկեղեցին՝ բնականաբար, ժամանակաւորապէս եւ, յատուկ նշենք՝ ստիպողական տարբերակով: Վերջինը հէնց այն տարբերակն է, որը բառացի հնարաւոր չէր համարում կիրառել Սմբատ Բագրատունին 600-ական թթ. (Մովսէս Ցուրտաւեցի եպիսկոպոսին ուղղուած վերջին նամակում սրտնեղելով՝ «հո չե՞մ կարող սրի քաշել այդ ամբողջ ժողովրդին»)[2], երբ, չեշտենք, բոլորովին այլ էր պարսկա-բիւզանդական ուժերի յարաբերակցութիւնը: Զէ՞ որ, ինչպէս նկատել է դեռեւս Ս. Երեմեանը, «Աշխարհացոյց»-ում Վրաց աշխարհ-շահրի նշանաւոր սրբավայրերը, օր.՝ Մցխիթայի խաչը, ներկայացուած են լիովին դրական լոյսով, այն դէպքում, երբ 609 թ. Աբրահամ Աղբաթանեցին, ի վերջոյ, նզովքի սպառնալիքով արգելեց իր հօտին ուխտի գնալ այնտեղ: Ի դէպ, ուսումնասիրողն այդ հիմքով էր «Աշխարհացոյց»-ի ստեղծումը թուագրում 609/610 թ. նախորդող ժամանակով, որն, այսպիսով, պիտի համարուի վերապահելի:

«Աշխարհացոյց»-ի՝ նման, փաստօրէն՝ ուղիղ վկայութեանը կարելի է յաւելել հայ եւ վրաց մատենագրական երկերի (այդ թւում՝ վերը նշուած «Վիրոյ կաթողիկոսի պատմութեան») անուղղակի տուեալներն այն մասին, թէ ինչ անողոքութեամբ էր 626-627 թթ. Հերակլ կայսեր լեգէոնների ու նրա դաշնակից թիւրքիւտների (վրացական երկում՝ խազարների) հրոսակների դէմ մարտնչում Տփղիսի ամրոցում շրջապատուած «Քարթլիի էրիսթաւ» Ստեփանոզ-Ստեփանէն[3] (հայկական երկում՝ «տեղացի Վրաց իշխանը»): Իսկ դեռեւս Անտիոքոս Ստրատեգոսի երկին նուիրուած իր մենագրութեան մէջ ակադ. Նիկ. Մառը ցոյց է տուել, որ Հերակլ կայսեր նկատմամբ դրական կամ բացասական (անգամ՝ իներտ) վերաբերմունքից կարելի է որոշել հայ եւ վրացի մատենագիրների ու նրանց հերոսների՝ երկաբնակ կամ հակաքաղկե-

---

1 **Յովհան Մամիկոնեան**, *Պատմութիւն Տարաւնոյ*, Հրատ. **Ա. Յակոբեան**, – «Մատենագիրք Հայոց», հտ. Ե, Անթիլիաս, 2005, էջ 1122-1124:

2 **Սմբատ Բագրատունի**, *Թուղթք* [3], Հրատ. **Պ. Մուրադեան**, **Ա. Յակոբեան**, – «Մատենագիրք Հայոց», հտ. Դ, Անթիլիաս, 2005, էջ 340:

3 **Джуаншер Джуаншериани**, *Жизнь Вахтанга Горгасала*, Пер., введение и примечания **Г. В. Цулая**, Тбилиси, 1986, էջ 99-100; *Քարթլիս ցխովրեբայի կամ Վրաց պատմութեան հին հայերէն թարգմանութիւնը*, Վրացերէն բնագիրը եւ հին հայերէն թարգմանութիւնը ուսումնասիրութեամբ եւ բառգրքով լոյս ընծայեց **Ի. Աբուլաձէն**, Թբիլիսի, 1953, էջ 189-190:

*դոնական լինելը[1]: Տեղին նշենք, որ այդ իշխանը 627 թ. մահապատժի ենթարկուեց (մորթազերծ արուեց) Իրանի դէմ ծանր պատերազմում, ի վերջոյ, յաղթանակած բիւզանդացիների կողմից (628-ի գարնանն իր մայրաքաղաքում սպանուեց նաեւ Խոսրով արքան), որից յետոյ, ամենայն հաւանականութեամբ, Վիրքը վերադարձուեց քաղկեդոնական դաւանանքին. ընդ սմին՝ 632 թ. Կարնոյ ժողովում Հերակլի պարտադրած միակամութեան-մոնոթելիզմի «փոխզիջումային» (բոլոր դէպքերում, իրօք՝ աւելի մեղմ) տարբերակով երկաբնակութեանը զիջումների գնաց նաեւ Հայոց կաթողիկոս Եզր Արահեզացին:*

*Այս քննութեան արդիւնքները թոյլ չեն տալիս համաձայնուել մասնագիտական գրականութեան մէջ վերջին տարիներին ձեռնարկուած նոր փորձերին (Բաբկէն Յարութիւնեան եւ Ալբերտ Մուշեղեան)՝ փաստարկելու Ե դ. երկրորդ կէսի պատմիչ Մովսէս Խորենացուն «Աշխարհացոյց»-ի հեղինակ անուանող ուշ ձեռագրական աւանդոյթի հաւաստիութիւնը[2]: Ճիշտ է, նշուած ուսումնասիրողների փորձերը վերաբերում են ոչ թէ մեզ հասած բնագրին (գոնէ Զ դ. վերջին յարող ծաւալուն նիւթով՝ Յառաջաբանը, Մեծ Հայքն իր շրջակայ երկրներով, Պարսից աշխարհը եւն), այլ վերջինիս համար իբրեւ նախագաղափար ծառայած ինչ-որ մի օրինակի (Է դարում «լուրջ խմբագրութեան» ենթարկուած): Սակայն նման ենթադրական օրինակի բնութագրիչները (պարամետրերը), այդուհանդերձ, յստակօրէն չեն սահմանւում նշուած մասնագէտների հրատարակած աշխատանքներում[3]: Ի դէպ, մեր առայժմ նախնական տպաւորութեամբ՝ գուցէ, փոխարէնը կարող է հեռանկարային լինել «Աշխարհացոյց»-ի հեղինակի փնտրտուքը «Պարսից ժողովի» այն երկու հայ մասնակիցների թւում (Կոմիտաս Ռշտունեաց եպիսկոպոս եւ Մատթէոս Ամատունեաց եպիսկոպոս), որոնց յիշում է Սեբէոսը[4] (նման վարկածը ներկայումս գոնէ պիտի հերքի յայտնի երկերի ու դաւանական ժողովածոների բանասիրական նոր քննութիւնը, որին փորձելու ենք ձեռնարկել):*

*«Աշխարհացոյց»-ի համառօտ խմբագրութեան՝ շուրջ չորս տասնեակ գրչագրերում մեզ հասած բնագրի (արդէն՝ վերականգնելի հեղինակային սկզբնագրի մասին որոշակի հաւանականութեամբ պատկերացում տուող համեմատական տարբերակով) համադրական ընթերցումը ցոյց է տալիս, որ համառօտող խմբագիրն ուղղակի իր առջեւ չի դրել լուրջ սրբագրման կամ ծրագրային գաղափարախօսական խնդիրներ լուծելու նպատակներ: Կատարուել են զուտ կրճատումներ ու պարզեցումներ, որոնք, բնականաբար, երբեմն յանգեցրել են բովանդակութեան յայտնի խեղաթիւրումների, սակայն՝ ամենեւին ո՛չ նպատակամղուած (օր.՝ Իրանշահրի նկարագրութեան հատուածում, ուր համառօտը, իւրօրինակ ձեւով «խուսափելով կրկնութիւնից», չի պահել «Աշխարհ Պարսից» հատուածը, իսկ նրա չորս մասերի նիւթը լրիւ*

---

1 Տե՛ս **Антиох Стратиг**, *Пленение Иерусалима персами в 614 г.*, Груз. текст исследовал, перевел, издал ... **Н. Марр**, СПб., 1909, էջ 60:

2 Տե՛ս **Բ. Յ. Յարութիւնեան**, *Մեծ Հայքի վարչաքաղաքական բաժանման համակարգն ըստ «Աշխարհացոյց»-ի*, Եր., 2001; **Ա. Վ. Մուշեղեան**, Մովսէս Խորենացու դարը, Եր., 2007:

3 Բնականաբար, «Աշխարհացոյց»-ը մեծապէս արտացոլում է օգտագործուած գլխաւոր աղբիւրների՝ Պտղոմէոսի եւ Պապպոս Աղէքսանդրացու երկերի՝ Բ եւ Դ դարերին վերաբերող նիւթը (որին Է դ. հեղինակն աւելացրել է այլ աղբիւրներից քաղած իր ոչ պակաս պատկառելի գիտելիքը): Եթէ ենթադրենք այդ երկերի արդէն թարգմանուած լինելը Ե-Զ դդ., ապա ասուածին պիտի յաւելենք նաեւ նշուած դարերի «վաղ» նիւթը: Սակայն վերջինս, ինչպէս եւ որեւէ այլ վաղ աղբիւրագիտական նիւթ, չպէտք է մեզ շտապողական ժամանակագրական լուծումներ պարտադրի:

4 Վերջինիս բնագիրն է. «Դիպեցան անդ արք երկու եպիսկոպոսք յաշխարհէն Հայոց, արք հաւատարիմք, զորս վասն բռնութեան աշխարհին էին արձակեալ, զի ծանուցեն թագաւորին՝ Կումիտաս Մամիկոնէից եպիսկոպոս եւ Մատթէոս Ամատունեաց» (***Սեբէոսի եպիսկոպոսի*** *Պատմութիւն*, էջ 124; *Պատմութիւն* ***Սեբէոսի***, էջ 170):

*խմբագրել-բաժանել է յաջորդող՝ Մարքի, Ելիմացիքի, Պարսքի եւ Արիքի գլուխների մէջ, որ համապատասխանում էին պտղոմէոսեան աշխարհներին[1]): Բացի այդ՝ նկատուած է, որ արաբների հզօրացումն արծարծուած չէ նաեւ «Աշխարհացոյց»-ի համառօտ բնագրում, ուստի՝ պարզ է, որ վերջինս կազմուել է 620 կամ 630-ական թթ.: Ժամանակագրական այս սահմանը թոյլ է տալիս մտածել, որ համառօտութեան հեղինակը կարող էր լինել երիտասարդ եւ դեռ վարդապետական գիտելիքներ ձեռք չբերած Անանիա Շիրակացին (ծնուել էր 610-ական թթ. սկզբներին), որին հետագայ ձեռագրական աւանդոյթը վերագրում է համառօտ «Աշխարհացոյց»-ի մի քանի միաւորների հեղինակումը: Այս պահին խուսափելով փաստարկումների հանգամանալից քննարկումից՝ հակիրճ նշենք, որ աղբիւրագէտի հայեցքով ամենեւին ընկալելի չէ Շիրակացուն բուն «Աշխարհացոյց»-ի հեղինակ համարող մասնագիտական վարկածի շարունակական արծարծումը[2], քանի որ, ինչպէս նկատել է Ս. Երեմեանը, դրա բացառման համար լիովին բաւարար է 618 թ. հիմնադրուած կամ օծուած Ս. Հռիփսիմէի տաճարի փոխարէն սրբուհու մատուռի յիշատակման փաստը:*

*Մեր նշած ժամանակագրական տարբերակով (630-ական թթ.) կարող է ընկալելի դառնալ ե՛ւ հետագայ ձեռագիր ժողովածոներում Շիրակացու երկերի հետ համառօտ «Աշխարհացոյց»-ի հարեւանութեան փաստը, ե՛ւ նրա այդ երկերում առկայ տիեզերագիտական որոշ պատկերացումների չեղումը «Աշխարհացոյց»-ի հեղինակի պատկերացումներից: Թւում է՝ թէ հասուն տարիքում վարդապետը լիովին կարող էր որեւէ կերպ անդրադարձած չլինել պատանի տարիների իր «տեխնիկական» գործերից մէկին, բայց միաժամանակ՝ դա հազիւ թէ խանգարէր նրա* գիտուն *սաներին՝ այդ գործը եւս մեքենայաբար ներառելու իրենց ուսուցչի նորակազմ ժողովածոներում:*

*Այսպիսով, Է դարի «Աշխարհացոյց»-ը կարող է ներկայանալ ստորեւ տրուած՝ նոր կէտադրմամբ եւ տողատմամբ գիտաքննական բնագրով, որի վերաբերեալ որոշ գնահատականներ հրապարակել ենք վերջին տարիների գիտաժողովներում ընթերցած զեկուցումներում եւ հրատարակած աշխատանքներում[3]: Նոր բնագիրը կազմուած է միակ գրչագրով պահպանուած մատենագրական միաւորի նախօրինակի վերականգնման սկզբունքներով (Վենետիկի թիւ 1245 գրչագրի ընթերցումները նշանակում ենք՝ V, իսկ* [1բ] – [38ա] *ձեւով՝ նրա էջերը): Բոլոր այն դէպքերում, երբ հնարաւոր չէ յատուկ փաստարկել համառօտ տարբերակի ընթերցումների՝ խմբագրման արդիւնք, իսկ յայտնի աղբիւրներից շեղումների՝ հէնց երկի հեղինակի վրիպման հետեւանք չլինելը, նախապատուութիւնը տուել ենք V-ի ընթերցումներին: Ընդ որում վերջինիս՝ ցաւալիօրէն առատ թերիներից ու պակասներից իւրաքանչիւրի համար փորձել ենք մատնանշել նախ եւ առաջ գրչական հնարաւոր վրիպման հաւանականութիւնն ու պատճառները[4] (*«տե՛ս եւ ... եւ», «հմմտ. Գ → Դ»* կամ նմանատիպ այլ ձեւեւով): Տողատակում ներկայացրել ենք եղած բոլոր միւս մօտեցումները եւ նշել չլուծուած հարցերը, որը թոյլ է տալիս չահագրգիռ ընթերցողին՝ ինքն-*

---

1 Առաւել մանրամասն տե՛ս **J. Marquart**, *Ērānšahr nach der Geographie des Ps. Mosēs Xorenaçi: Mit historisch-kritischem Kommentar und historischen und topographischen Excursen*, Berlin, 1901; *The Geography of* ***Ananias of Širak*** *(AŠXARHAC'OYC'). The Long and the Short Recensions*. Introduction, Translation and Commentary by **R. H. Hewsen**, Wiesbaden, 1992, էջ 226-241:

2 Վերջին անգամ տե՛ս Ռ. Հիւսընի հիմնարար անգլերէն հրատարակութեան մէջ. *The Geography of* ***Ananias of Širak*** *(AŠXARHAC'OYC'). The Long and the Short Recensions...*, Wiesbaden, 1992:

3 Տե՛ս, օր.՝ **Ա. Յակոբեան**, *Պատմա-աշխարհագրական եւ վիմագրագիտական հետազօտութիւններ (Արցախ եւ Ուտիք)*, Վիեննա–Եր., 2009:

4 Դրանց մասին մանրամասն տե՛ս **Ն. Բիւզանդացի**, *Քննութիւն Հայոց հնագրութեան*, Հրատ. պատրաստեց **Մ. Մինասեան**, Բեռն, 1986:

*ուրոյն եզրակացութիւնների յանգելու*[1]*: «Մղոնաչափք»-ի եւ հեղինակային՝ «Այս քեզ յինէն ընծայ... Ո՜ղջ լեր ի Տէր» ընծայագրութեամբ աւարտուող «Աստղաբաշխական երկրաչափութիւն» կամ «Աւդաչափութիւն» վերտառութեամբ աւարտական հատուածի (որոնց՝ «Աշխարհացոյց»-ի մաս լինելը հիմնաւորապէս ապացուցել են դեռ ակադ. Յ. Մանանդեանը եւ Աշ. Աբրահամեանը*[2]*) հրատարակուած բնագրերը համեմատել ենք հայերէն հնագոյն թղթեայ գրչագրի (ՄՄ, թիւ 2679)՝ նմանահանութեամբ կատարուած տպագրի*[3] *եւ մի քանի առաւել վաղ ձեռագրերի հետ:*

*Օգտագործել ենք հետեւեալ փակագծերը եւ նշանները. [...] — վերականգնում V-ի գրչի վրիպած եւ լոկ համառօտում պահպանուած հատուածներից*[4]*;* [...] *— վերականգնում V-ի գրչի վրիպած տառերի*[5]*;* [ր] *— զուտ վարկածային վերականգնում;* $^{ա}$Ա... *— V-ի գրչի վրիպած աւելորդ տառեր; (...) երկի հեղինակի՝ փակագծում արուած զեղումներ;* պ$^{ա}$տմութ$^{եան}$ց *— պատուոյ նշանի բացուածք: Բնագրի ընդգծուած հատուածները (օր.՝* աւ*) ցոյց են տալիս, որ հէնց այդպէս է V-ում: Տողատակի ծանօթագրութիւններում համառօտ յղումներ ենք կատարել այն ուսումնասիրողների աշխատանքներին (օր.՝* Երեմեան, 1963 *կամ* Патк. *ձեւերով), ովքեր յիշատակուած են սոյն առաջաբանում: Այս սկզբունքներով վերակազմուած բնագիրը, թւում է, թէ որոշակի հաւանականութեամբ պատկերացում է տալիս նրա եօթերորդդարեան սկզբնօրինակի մասին:*

Տառանիշներ բաղդատուած ձեռագրերի եւ բնագրերի

*V* – Վենետիկի Մխիթարեան միաբանութեան մատենադարանի ձեռ. թիւ 1245, ժամանակը՝ 1604 թ.

*B* – ՄՄ ձեռ. թիւ 2679, ժամանակը՝ 981 թ.

*C* – ՄՄ ձեռ. թիւ 4166, ժամանակը՝ ԺԳ դար

*D* – ՄՄ ձեռ. թիւ 1267, ժամանակը՝ ԺԵ դար

*E* – ՄՄ ձեռ. թիւ 582, ժամանակը՝ 1575 թ.

*A* – Աշ. Աբրահամեանի հրատարակած բնագիր, Երեւան, 1944 թ.

*P* – Ք. Պատկանեանի հրատարակած բնագիր, Ս. Պետերբուրգ, 1877 թ.

*v* – Վենետիկի 1848 թ. հրատարակութեան բնագիր

$v^{1-4}$ – Վենետիկի Մխիթարեան միաբանութեան մատենադարանի ձեռագրեր, որոնք օգտագործել են 1848 թ. հրատարակութեան աշխատասիրողները, ընդ որում՝ կցուած թուերը ցոյց են տալիս տուեալ ընթերցումն ունեցող գրչագրերի քանակը:

$v_{ın}$ – Վենետիկեան հնագոյն տպագրի բնագիրը, որն օգտագործել են 1848 թ. հրատարակութեան աշխատասիրողները:

---

1 Նշեմ, որ «Աշխարհացոյց»-ի հետազօտութեան երախտաւորների՝ Արսէն Սուքրեանի, Քերովբէ Պատկանեանի, Եօզէֆ Մարքուարտի, Յակոբ Մանանդեանի, Աշոտ Աբրահամեանի, Սուրէն Երեմեանի, Բաբկէն Յարութիւնեանի, Ռոբերտ Հիւսընի եւ այլոց բնագրագիտական-բանասիրական եւ պատմա-աշխարհագրական դիտարկումները, որ մեծապէս նպաստել են մեր կատարած աշխատանքին, շարունակելու են քննարկելի մնալ հայագէտների նոր սերունդների համար: Առիթից օգտուում եմ՝ ջերմ երախտագիտութիւնս յայտնելու ներկայ աշխատանքում ինձ յամենայն սատարած բազմաթիւ գործընկերներիս:

2 Տե՛ս **Յ. Մանանդեան**, *Խորենացու առեղծուածի լուծումը: «Աշխարհացոյց»-ը եւ Մովսէս Խորենացին*, Եր., 1934, էջ 84-89; **Ա. Աբրահամեան**, *Խորենացուն վերագրուող «Աշխարհացոյց»-ի հեղինակի հարցի շուրջը*, էջ 91-101:

3 Տե՛ս *Մատեան գիտութեան եւ հաւատոյ* ***Դաւթի քահանայի***, *Հայերէն թղթեայ հնագոյն ձեռագիր, 981 թ.*, Նմանահանութիւնը տպագրութեան պատրաստեց եւ աշխատասիրեց **Ա. Ս. Մաթեւոսեանը**, Եր., 1995, թ. 208ա:

4 Դրանք նաեւ այլ տառատեսակով են տրուած եւ ծանօթագրուած են հատուածի աւարտին:

5 Տողատակում ծանօթագրուած չեն լոկ ձայնաւորներին յաջորդող յ կիսաձայնը եւ գաղտնավանկի ը-ն:

# ԱՇԽԱՐՀԱՑՈՅՑ

## [Ա.][1]

1 [Յ]Աստուածաշունչ[2] գիրս ոչ գտանի[3]
կատարեալ գիտութիւն աշխարհաց ործխու-
թեանց, վասն որոյ հարկաւորիմք ձեռնարկել
յարտաքինսն, որք զաշխարհագրութիւն յարմա-
րեցին ի ճանապարհորդութենէ[4] եւ ի նաւարկու-
թենէ, եւ ստուգեցին յերկրաչափութենէ, եւ ինքն
յերկրաչափութիւն[5] գտաւ յաստեղաբաշխութենէ:
2 Քանզի ուշ եղեալ խոկացին, թէ ո՛ր տեղիք
երկրի ընդ որո՛վք իցեն[6] կարգեալ յերկնա[յ]ին
բոլորակին, եւ զմեծութիւնն տուընջեան եւ գիշե-
րացն: 3 Եւ զոր ի վերա[յ] երկրի եւ զոր ի ներքոյ
երկրի՝ միշտ բերելով՝ յայտնեն եւ զբնակութիւնն
մարդկան, ի միջաւրէական[7] գծէն[8] զդիրսն առնե-
լով ասպարիսական չափով՝ ի նաւարկութենէ եւ ի
ճանապարհորդութենէ [1բ] իմացեալ զկայանսն եւ
զփոփոխեալսն, եւ զայլ՝ այլուր այլապէս երեւեա-
լն: 4 Քանզի ի վերա[յ] Այրեցածին բերին կենդա-
նատեսակքն, մտանեն եւ ծագեն՝ բայց Փոքր Արջն
գեր ի վերոյ կալով երկրի, ի հիւսիսա[յ]ին կողմա-
նն՝ ասպարիսաւք հինգ հարիւր եւ երկու[9] հինգե-
րեկաւք, եւ անդէն[10] զԹուլիս կղզի, որ մեկնէ
զհիւսիսականացն անց:

5 Եւ[11] զծանուցելո[յ] երկրիս [իբրեւ]
զգ[ե]տ՝ ըստ[12] լայնութեանն վաթսուն եւ երեք[13]
եւ եւթնեւտասն[14], որպէս միջաւրէական շրջանա-
կն երեք հարիւր վաթսուն եւ երեք[15] բիւրաւք, եւ
վեց հազարեկկիւք[16] մասամբք հինգ հարիւր[17] չա-
փուց ասպարիսաց՝ մերձ շուրջունողութեամբ[18]:

6 Իսկ[19] հարաւայինն խոնարհի ի սուզակա-
նն, եւ այլակերպ զայլս երեւեցուցանեն. որպէս
Դէո[դո]րոս[20] Սամիացի ասէ զՀնդկաց, եթէ ի Լի-
մ[եռ]իկոն[21] նաւելով, ունելով զՏաւռոն[22]՝ միջն-
երկնեայ եւ զՊղա[յ]իդա[յ][23]՝ ընդ մէջ Կեռեա[յ]:
7 Իսկ[24] յԱզանիա նաւելով առ Միջերկրականն՝
զԿանաբուս աստղ, որ է Իպպոս՝ ի նոցանէ երե-

---

1 V Աշխարհացոյց Մովսէսի Խորենացոյ ասա-ցեալ փխ Աշխարհացոյց. [Ա] (վեր., այս վերնագիրը եւ 2 տող (մինչեւ գիտութիւն) կարմրով են)

2 V Աստուածաշունչ փխ ՅԱստուածաշունչ (վեր. Սուքրեանի. թերեւս, գրիչը Յ սկզբնատառը բաց է թողել՝ հետագայում գունազարդ նկարելու համար, ապա, ինչպէս յաճախ՝ մոռացել է դա անել)

3 V գտանուի փխ գտանի (վեր. Սուքրեանի. հմմտ. նախ. Ա.33, Ե.42, 128, 134, 141 եւն)

4 V ճանապարհհորդութենէ փխ ճանապարհորդութենէ (վեր. Սուքրեանի՝ ըստ նախ. Ա.3, 7, Ե.285)

5 V յերկրաչափութիւն փխ երկրաչափութիւն (վեր. Սուքրեանի)

6 V իցին փխ իցեն (վեր. Սուքրեանի)

7 VS մէջաւրէական փխ միջաւրէական (վեր.՝ ըստ հետագայի. տե՛ս, օր.՝ նախ. Ա.5)

8 V գծեն փխ գծէն (վեր. Սուքրեանի)

9 V շբ (with titlo)

10 Սուքրեանը տողատակում ծանօթագրել է «Թերեւս անդ դնեն. իսկ այլ Օր. աւանդեն»

11 V-ում Ե-ն գլխատառով է, կարմրով եւ կրկնակէտից յետոյ, որ պարբերութեան նշան է

12 VS զդրըստ փխ [իբրեւ] զգ[ե]տ՝ ըստ (վեր.՝ ըստ համառօտի, տե՛ս ուշ երկաթագիր Գ → Դ եւ Տ → Ր. Սուքրեանի տողատակի ծանօթագրումն է «Այլ Օր. իբրեւ զգետ՝ ըստ լայնութեան»)

13 V կգ (with titlo)

14 V ժէ (with titlo), S եօթնեւտասն փխ եւթնեւտասն (վեր. ըստ յաջորդների, տե՛ս նախ. Ա.8, Բ.10, 16, 18)

15 V յկգ (with titlo)

16 V ց.եկիւք (with titlo)

17 V շ (with titlo)

18 Համառօտում էլ է նոյն՝ վատ ընկալելի «մերձ (ADEv[4] մեծ) շուրջունողութեամբ (DPv[2] շուրջունելութեամբ)»-ը. բայց, գուցէ, «մերձ» = վրիպեալ «մեր ձ[=երկիր]»?

19 V-ում Ի-ն գլխատառով է եւ կարմրով, որ պարբերութեան նշան է

20 V Դէորոս, S Դիոդորոս փխ Դէո[դո]րոս (վեր., տե՛ս Դէոդորոս. համառօտում՝ «Դիոդորոս (E Դերդորոս, Dv[4] Թէոդորոս) Սամէացի (AE Սամեացի, Dv[4] Սամոստացի)»)

21 V Լիկիկոն, AE Ղիմեռիկոն, DPv Լիմեռիկոն, S Լիմիրիկոն փխ Լիմ[եռ]իկոն (վեր. ըստ DPv. Պտղոմէոսի մօտ Λιμυρικήν է)

22 Սուքրեանը տողատակում ծանօթագրել է «Այսինքն են Ցուլն եւ Բազմաստեղքն (Pléiades)»

23 V զՊղաւգա, S զՊղաւդա փխ զՊղա[յ]իդա[յ] (վեր.՝ ըստ համառօտի APv-ի (E զՂայիդա, Dv[3] զԼուդա). տե՛ս ուշ երկաթագիր Ի → Ի եւ Դ → Գ)

24 V-ի Ի-ն կարմիր գլխատառով է եւ կրկնակէտից յետոյ, որ պարբերութեան նշան է (վրիպեալ)

ւեալ, եւ ի մէջ նոցա Ապռոտիկոն հնձական[1] եւ այլ բազում ինչ ասացեալ՝ մինչ եւ[2] Ցամաքեալ գաւտին բերելով ընդդէմ տիեզերականին, առ Եթ[է]ովպաց[ւ]ոց[3] ճանապարհորդութեանն յԱկիսիմբ[այ][4] աշխարհէն, եւ զՊռասոն ծայր ընդ ձմեռնա[յ]ին [2ա] շաւղովն[5] յաներեւակն եւ ի սուզականն կոյս։

8 [6]Քանզի յեւթն[7] նահանգացն զառաջինն տուեալ է ըստ հարաւո[յ] միջաւրեա[յ] գծին. եւ զերեքն[8] ի նմանէ յԱրջն կոյս՝ այսպէս. երկրորդն՝ ընդ Սիւնիս[9]՝ ժամս ունելովս յերեքտասանէս[10], իսկ[11] երրորդն՝ ընդ Աղէքսանդրիա՝ կիսաժամաւ յառաջ մատուցեալ, որպէս եւ ամենայնք, չորրորդ՝ [ընդ][12] Ռոդոս, որ է միջին նահանգաց եւ կարեւոր ի համաչափութիւնս ըստ գնդական յայտնութեան՚ցն, իսկ[13] հինգերորդն՝ ընդ Հռոմ, վեցերորդն[14]՝ ընդ Կոստանդնուպաւլիս[15], եւթներորդն[16]՝ ընդ Սկիւթիա, եւ ամենայն երկիր[17], որ ըստ դոցին դասեցան։

9 [18]Յորս նախ առնելի է զտիեզերաց ստորագրութիւն՝ նմանութեամբ գնդականաց պատկերին, եւ ապա ձեւեալ[19] ըստ նորին նմանութեանն, երկրորդ[20] գնդաւն աստեղեակաւ[21], զմեծ կէս շրջանակին, ունելով հարիւր ութսուն[22] [մասն][23] բնակութեան մարդկան, եւ զվերաչափութիւնն առնելով ժամադիտակաւն, ի ձեռն երեւեցելոց աստռողաբռն[24] եւ սկիւթռոն գործարանացն, բայց կարեւոր է դի՚՚ոպտռայ[25] առ ի ցամաքաչափութիւն։

10 Իսկ Իպպառքոս[26] զքաղ[աք]ս[27] ծովական չափով աւանդեաց, եւ զլուսնի[28] պակասու-

1 Սուքրեանի ծանօթագրումն է՝ «Այլ Օր. հնչական», որ համառօտի բառն է. բայց գուցէ, պիտի ընկալել իբրեւ պակասաւոր «հնձ^[=երկիր]-ական»? (հմմտ. նախ. Ա.8). համառօտում նախորդ բառի տարբերակներն են՝ D Ապռիտիկիոն, Pv՝ Ապռիտիկոն, $v^3$ Ապռիկիկոն, $v^1$ Պռոտիկոն (սա անցել է ՆՀԲ), իսկ յուն. ἄβροτος = «անմարդ», «անբնակ». թէպէտ, ըստ Սեն-Մարտէնի եւ Պատկ.՝ համեմատելի է լատ. flatus apricus = «արեւակող», «հարաւակող» (Պլինիոս Աւագի մօտ)

2 VS մինչեւ փխ մինչ եւ (վեր., նախորդող բութով)

3 VS Եթովպացոց փխ Եթ[է]ովպաց[ւ]ոց (վեր. ըստ յաջորդների, օր.՝ նախ. Ա.26, 29, Բ.6, Գ.54)

4 V յԱկիսիմբ փխ յԱկիսիմբ[այ] (վեր. Սուքրեանի՝ ըստ այլոց, օր.՝ նախ. Ա.39)

5 V շողովն փխ շաւղովն (վեր. Սուքրեանի. տե՛ս բանաւոր **ԱՒ/O → Ո**)

6 Այստեղ Երեմեանը վերականգնում է ենթավերնագիր՝ «Յաղագս եւթն նահանգացն երկրիս»

7 V յէ̄, S յեօթն փխ յեւթն (վեր.՝ ըստ Ա.8, Բ.10 եւն)

8 V զգ̄ն

9 Ըստ Պատկ., Երեմեանի եւ Hewsen-ի՝ վերականգնելի է ըստ Պտղոմէոսի՝ Συήνης – Սիենիս փխն. Սիւնիս (VAPv). համառօտի այլ տարբերակները օգտակար չեն՝ $Dv^2$ Աւինս, E Ալգոնեալ, $v^2$ Այինս. հմմտ. ստորեւ, նախ. Ե.5՝ «զՍիւնաս լին»

10 V ունելովս յժ̄գ̄էս, S ունելով երեքտասան եւ կէս փխ ունելովս յերեքտասանէս (վեր.)

11 V-ի **ի**-ն գլխատառով, կարմրով եւ կրկնակէտից յետոյ է, որ պարբերութեան նշան է

12 VS չիք ընդ (վեր.՝ ըստ նախ-եան միւս ընդ-երի)

13 Այս **ի**-ն եւս պարբերութեան սկզբի նշաններով է

14 V-ի **վ**-ն գլխատառով, կարմրով եւ կրկնակէտից յետոյ է, որ պարբերութեան նշան է՝ անտեղի

15 V Կոստ̄պաւլիս (ըստ ստորեւ՝ նախ. Գ.59, 60, Ե.2)

16 S եօթներորդն փխ եւթներորդն (V. **ե**-ն գլխատառով է, կարմրով եւ կրկնակէտից յետոյ, որ պարբերութեան նշան է, բայց՝ անտեղի)

17 V ձ, S աշխարհ փխ երկիր (վեր., «երկիր» նշանակող այս բոլորագիր **ձ**-աձեւ գաղափարագիրը գրիչը կիրառել է եւս մի քանի անգամ)

18 Այստեղ Երեմեանը վերականգնելի է համարում ենթավերնագիր՝ «Յաղագս տիեզերաց ստորագրութեան»

19 S ձեւել փխ ձեւեալ (V)

20 V-ի **ե**-ն գլխատառով եւ կարմրով է, որ պարբերութեան նշան է

21 S աստեղականաւ [ըստ համառօտի] փխ աստեղեակաւ (V. երկրորդ **ա**-ն **եկ**-ի վերեւում է)

22 V ճ̄ձ̄ (համառօտի Pv-ում թիւը նոյնն է, իսկ $ADEv^4$-ում՝ «հարիւր ութսուն **եւ երեք**»)

23 VS չիք մասն (վեր. Երեմեանի՝ ըստ յաջորդների, տե՛ս, օր.՝ նախ. Ա.12, 18, 25, 27, Բ.5, 6 եւն)

24 S աստռոլաբռն փխ աստռողաբռն (V. համառօտի $Dv^1$-ում աստղոռոբոն, $v^3$-ում աստռոռոբոն է, յաջորդ գործիքը կոչում են՝ AE-ն՝ զսկիաթիռովն, D-ն՝ ոկիթիոոն, Pv-ն՝ սկիթռոն, v-ը՝ սկիթիոոն)

25 V դիտոպտռայ փխ դիոպտռայ (վեր. Սուքրեանի՝ ըստ համառօտի DPv-ի եւ Պտղոմէոսի, AE-ում դեռպատռեայ է, $v^3$-ում՝ դիոպետռայ)

26 S Իպառքոս փխ Իպպառքոս (V)

27 V զքաղս փխ զքաղաքս (վեր. Սուքրեանի. սղման դէպքերում գրիչը պատույ նշան է դրել)

28 V զլոյսնի փխ զլուսնի (վեր. Սուքրեանի)

*թիւն յԱռբիւղա[յ]ու հինգ[1] ժամ աւանդ*[2բ]*եալ, ի Կարքեդոն երկոտասան[2] արժանաւորեալ:* 11 *Բայց Մառին Տիւռեսացի յերկրական բոլորակէն ուղղե[ա]լ[3]՝ որչափ կարէ ցուցանել ժամադիտակն, առնէ զտիեզերագրութիւն ըստ ճանապարհակցութեանն:* 12 *[Որպէս[4] Պտղոմէոս Կղաւդէոս չափեալ ասպարիսաւք զամենայն[5] բնակութիւն մարդկան երկայնութեամբ՝ յարեւմտից սկիզբն արարեալ, որ է Ծով անծանաւթ՝ Ովկիանոս[6], ի ծայրէն[7] Սպանիա աշխարհին[8], մինչեւ յարեւելս, յեզեր Սինէացւոց[9] աշխարհին, յԱնծանաւթ երկիր[10]՝ մասունս հարիւր ութսուն:* 13 *Սոյնպէս[11] եւ լայնութեան[12] սկիզբն արարեալ յԱյրեալ գաւտւոյն[13], չափեալ զհիւսիսի ցԱնծանաւթ[14] ծով եւ երկիր՝ մասունս վաթսուն եւ երիս. եւ դարձեալ յԱյրեալ գաւտւոյն ի հարաւակոյս չափեալ յԱնծանաւթ երկիր՝ մասունս[15] եւթնեւտասն, որպէս[16] լինել ամենայն լայնութեանն[17] մասունս ութսուն:* 14 *Եւ առաւել յարտաքս[18] կոյս, քան զայն[19]՝ չէ ուրեք[20] զեզր երկրի տեսեալ կամ գիտացեալ, որպէս ասէ Պտղոմէոս, այլ Անծանաւթ[21] կոչի երկիր եւ Ովկիանոս:* 15 *Յորում ինքնագիր[22] բոլորակին «Տիեզերագրութեանցն»[23] առեալ Պապայ Աղէքսանդրացւոյ[24] համառաւտաբար «Երկրագրութիւն»[25], յորմէ մեր եւ այլ[26] ծայրաքաղ արարեալ՝ գրեցաք զմեծամեծսն եւ զնշանաւորսն միայն:*

16 *Եւ զչափս որչափութեանց չափուցն[27] ո՛չ ըստ յատակի երկրի[28], այլ ըստ կատարաց բարձր[29] լերանց տեսութեան][30]՝ ընդ յաւդդ[31] անցանելով, ի ձեռն գոր[ծ]արանացն[32] նկատելով զնշոյլս Արեգական եւ Լուսնի եւ աստեղաց, ըստ անցն իւր եւթն[33] նահանգաց փոփոխման սահմանաց:* 17 *Եւ սահման է բան կարճառաւտ՝ յայտնիչ բնութեան ենթակա[յ][34] իրացն, որ զիւրն ի ներքս փակէ եւ զայլոցն ի բա՛ց[35] որոշէ[36]:*

---

1 *V* յԱռբիւղաու ե̄, *S* յԱռբիւլայ ութ *փխ* յԱռբիւղա[յ]ու հինգ *(վեր., Սուքրեանի վրիպման պատճառը դժուար է գուշակել. համառօտում Ա.10-11 նախադասութիւնները թաց են թողնուած)*

2 *V* բ̄ժ̄ան *(գրիչն այս տողի վերջում ինչ-որ կարմիր եւ սեւ կայծակնաձեւ նշաններ է դրել)*

3 *V* ուղղել *փխ* ուղղեալ *(վեր. Սուքրեանի)*

4 $AEv^{1}$ որով, $Dv^{3}$ Որ է *փխ* Որպէս *(Pv)*

5 *AE* ամենայն *փխ* զամենայն *(Pv)*

6 *A* Ովկիանոսի *փխ* Ովկիանոս *(DEPv)*

7 *DPv* ծայրէ *փխ* ծայրէն *(AE)*

8 *AE* աշխարհէն *փխ* աշխարհին *(DPv)*

9 *AE* զեզեր Սիւնացւոց, *D* յեզր, *Pv* յեզր Սինէացւոց *փխ* յեզեր Սիւնէացւոց *(վեր.՝ ըստ V-ի այլոց, տե՛ս նախ. Բ.3, 17, Ե.306, 329, 336)*

10 *DPv* Անծանաւթ երկրի *փխ* յԱնծանաւթ երկիր *(AE)*

11 *AE* Սապէս *փխ* Սոյնպէս *(DPv)*

12 *AE* լայնութիւն *փխ* լայնութեան *(DPv)*

13 *AE* գաւտեաւն, *D* գաւտոյն *փխ* գաւտւոյն *(Pv)*

14 *AE* զհիւսիւսի յԱնծանաւթ *փխ* զհիւսիսի ցԱնծանաւթ *(DPv)*

15 *AE չիք* վաթսուն եւ երիս ... մասունս *(2 տող) (Pv. տե՛ս* **մասունս ... մասունս***)*

16 *Pv* որպէս զի $(ADEv^{3})$

17 *AE* ընդամէնը լայնութեան *փխ* ամենայն լայնութեանն *(DPv)*

18 *AE* արտաքս *փխ* յարտաքս *(DPv)*

19 *DPv* զայս *փխ* զայն *(AE)*

20 *DPv* ուրուք *փխ* ուրեք *(AE)*

21 $DEv^{3}$ ծանաւթ *փխ* Անծանաւթ *(APv)*

22 *Pv* ինքնադիր, $Dv^{2}$ երկնադիր, $v_{տ}$ երկրադիր *փխ* ինքնագիր $(AEv^{2}$*. հմմտ. ստորեւ, նախ. Բ.2)*

23 *AE* տիեզերագրութեանց *փխ* տիեզերագրութեանցն *(DPv)*

24 Աղեք... *փխն.* Աղէք... *վեր.-նումն՝ ըստ V-ի այլոց*

25 *Pv* երկրագրութեամբ, *D* երկրպագութեամբ *փխ* Երկրագրութիւն *(AE)*

26 *DPv չիք* եւ այլ *(AE)*

27 *DPv* որչափութեանցն *փխ* որչափութեանց չափուցն *(AE)*

28 *AE չիք* երկրի *(DPv)*

29 *DPv* յարաբարձր *փխ* կատարաց բարձր *(AE)*

30 *DPv* տեսութեանց *փխ* տեսութեան *(AE) / VS չիք* Որպէս... տեսութեան *(27 տող) (վեր.՝ ըստ համ. տե՛ս* ճանապարհակց**ութեանն** ... տես**ութեան***)*

31 *S* օդդ *փխ* յաւդդ *(V)*

32 *V* գորարանացն *փխ* գործարանացն *(վեր. Սուքր.)*

33 *S* եօթն *փխ* եւթն *(V)*

34 *V* ընթակա *[ը-ի վրայ՝ գրչի ուղղման կայծակնաձեւ նշանով] փխ* ենթակայ *(վեր. Սուքրեանի)*

35 *V* բայց *փխ* բաց *(վեր. Սուքրեանի)*

36 *Երեմեանի շտապողական պնդմամբ՝ այս նախադասութիւնն օտարամուտ տարր է «Աշխարհացոյց»-ի բնագրի համար (վերցուած է Դաւիթ Անյաղթի աշխատութիւնից՝ դեռ ըստ Патк.)*

18 *Եւ չափն է մասն, եւ մասն ասի հինգ հա-*
*րիւր*[1] *ասպարէզ:* 19 *Եւ ասպարէզն՝ հեռակցու-*
*թիւն վտաւան [մ]ի*[2], *եւ ըստ աւդաչափութեանն՝*
*հարիւր եւթն*[3] *քայլ:* 20 *Եւ քայլն՝ վեց*[4] *ոտն, եւ*
*ոտն՝ վեշտասան*[5] *մատն:* 21 *Եւ լինի ասպարէզն*
*վեց հարիւր քառասուն եւ երեք*[6] *ոտն՝ միով պա-*
*կաս:* 22 *Եւ մղոնն է եւթն*[7] *ասպարէզ:* 23 *Իսկ*[8]
*Պարսիցն*[9] *ասպարէզն է հարիւր քառասուն եւ*
*չորս*[10] *քայլ, եւ [մղոնն]*[11] *գետնաչափութեամբ՝*
*հազար*[12] *քայլ:* 24 *Եւ հրասախն է երեք*[13] *մղոն:*
25 *Եւ երկրաչափութեամբ՝ մասն է հինգ հարիւր*
*ասպարէզ չորեքկուսի*[14], *որպէս զի լինել մասինն*
*եւթանասուն եւ մի*[15] *մղոն եւ չորրեակ ՚եաւթ-*
*նեակ*[16] *եւ քսան եւ ութե[ա]կ*[17] *մի*[18]*:*

26 [19]*Արդ՝ այսպէս չափեցին զերկիր եւ*
*զծով, սկսեալ յԱյրեալ գաւտւոյն, յորում ոչ ինչ*
*բուսանի՝ Արեգականն ընդ յայն*[20] *գնալոյ յեղա-*
*նակէն ամարան, մինչ եւ*[21] [3ա] *ի ձմեռնա[յ]ինն եւ*
*անդրէն վերադառնա[յ]:* 27 *Վասն որո[յ] ասացին*
*զԱրեգակն շատ փոքր քան զերկիր. քանզի վաթ-*
*սուն եւ վեց*[22] *մասն ասեն զԱրեգակն՝ զերկուս*
*նահանգս ասելով զբովանդակութիւն Արեգա-*
*կ[ան]*[23], *այսինքն՝ աւթեւանս քառասուն*[24]. *յորմէ*
*ըստ հեղման շողոյն նրբացելո[յ] բոլորութեան՝ ա-*
*սացին զԱյրեցական գաւտ[ւ]ոյն*[25], *եւ աստի ան-*
*տի նորա ՚Ովկիանոս*[26] *ընդմիջելով զնա ի բ՟նա-*
*կութենէս*[27] *եւ ի հարաւա[յ]ին կիսագնդէն, զոր*
*Ընդդէմ երկիր կոչեցին բ՟նակեցելո[յ]*[28] *երկրիս, մե-*
*ծութեամբ ոչ ըստ սմա, այլ ըստ հիւսիսա[յ]ին կի-*
*սագնդին, զորս*[29] *կոչեն Գաւսացեալ*[30], *քանզի նմա*
*ասեն փոքրագոյն գծագրիլ, վասն անձուկ գոլո[յ]*
*բոլորակին, եւ ընդդէմ*[31] *նա, նմանապէս նորին ի*
*հարաւա[յ]ին եզրն, զոր կոչեն Ցա[մա]քեալ*[32]*:*

28 [33]*Եւ ոչ միայն զԱյրեցեալ գաւտե[ա]ւն*[34]
*[ասեն զՈվկիանոս]*[35], *այլ եւ զամենայն աշ-*
*խարհաւ շուրջ ասեն բնակեալ:* 29 *Զոր եւ Կոս-*
*տանդիանոս Անտիոքացի ի «Քրիստոնէական*
*տեղագրութեան», որ ասաց զտապանն յԱրեւե-*
*լ[ե]ան երկրէն*[36] *առ մեզ անցեալ:* 30 *Բայց Պտ-*
*ղոմէոս*[37], *որոյ արք բազմաշրջութեամբ զամե-*

---

1 *V* շ
2 *VS* վտաւանի *փխ* վտաւան [մ]ի *(վեր. Երեմեանի՝ ըստ համառօտի)*
3 *V* ճէ, *S* հարիւր եօթն *փխ* հարիւր եւթն *(վեր.՝ ըստ այլոց, օր.՝ նախ. Ա.8, Բ.10, 16, 18)*
4 *V* զ
5 *V* ժզ
6 *V* ոխգ
7 *V* է, *S* եօթն *փխ* եւթն *(վեր.՝ ըստ այլոց, օր.՝ նախ. Ա.8, Բ.10, 16, 18)*
8 *V-ի* Ի*-ն կարմիր գլխատառով է (պարբ-ն նշան)*
9 *Համառօտում՝* ասպարիզաց, *որը նշել է Սուք-րեանը.* «Այլ Օր. ասեն *ասպարիզաց ասպարէզն*»
10 *V* ճխդ
11 *VS չիք* մղոնն *(վեր. Երեմեանի՝ ըստ յաջորդի. հմմտ. «Մղոնաչափք»-ում՝ նախ. Զ.5)*
12 *V* ռ
13 *V* գ
14 *V* շ ասպարէս չորէքկուսի *փխ* հինգ հարիւր ասպարէզ չորեքկուսի *(վեր. Սուքրեանի)*
15 *V* հա, *S* եօթանասուն եւ մի *փխ* եւթանասուն եւ մի *(վեր.՝ ըստ այլոց, թէպէտ կայ եւ՝* յեաւթնեակ*)*
16 *S* չորեակ եօթնեակ *փխ* չորրեակ ՚եաւթնեակ *(V)*
17 *V* իըեկ, *S* քսանեւութեկ *փխ* քսան եւ ութե[ա]կ *(վեր)*
18 *Սուքրեանը տողատակում ծանօթագրել է* «Այլ Օր. *չորք եօթն՝ է քսան եւ ութ*». *դա համառօտն է*
19 *V-ում* Ա*-ն գլխատառով եւ կարմրով է (պարբ. նշան). այստեղ Երեմեանը վերականգնում է են-թավերնագիր՝* «Յաղագս չափման տիեզերաց»
20 *S* այն *փխ* յայն *(V)*
21 *S* մինչեւ *փխ* մինչ եւ *(V)*
22 *V* կզ
23 *V* Արեգակ *[լոկ կլորակ գաղափարագրով] փխ* Արեգական *(վեր. Սուքրեանի՝ ըստ համառօտի)*
24 *V* խ
25 *V* գօտոյն *փխ* գաւտ[ւ]ոյն *(վեր. Սուքրեանի)*
26 *V* յՈվկիանոս *փխ* Ովկիանոս *(վեր. Սուքրեանի)*
27 *V* բանակութենէս *փխ* բնակութենէս *(վեր. Սուքր.)*
28 *V* բանակեցելո *փխ* բնակեցելոյ *(վեր. Սուքրեանի)*
29 *S* զոր *փխ* զորս *(V)*
30 *Սուքրեանը ծանօթագրել է՝* «Այլ Օր. *ցամաքեալ*»
31 *Սուքրեանի ծանօթագրումն է՝* «Ոմանք *զդէմն*»
32 *V* Ցաքեալ *[վրան դրուած ուղղման կայծակնա-ձեւ նշանով] փխ* Ցամաքեալ *(վեր. Սուքրեանի)*
33 *Այստեղ Երեմեանը վերականգնելի է համարում ենթավերնագիր՝* «Յաղագս ծովու եւ ցամաքի»
34 *V* գաւտեւն *փխ* գաւտեաւն *(վեր. Սուքր.՝ ըստ Ա.39)*
35 *VS չիք* ասեն զՈվկիանոս *(վեր. Երեմ.՝ ըստ համ.)*
36 *V* յԱրեւելան երկրին *փխ* յԱրեւելեան երկրէն *(վեր. Սուքրեանի)*
37 *Դեռ ըստ Պատկ. եւ Երեմեանի՝ այս հատուածը համեմատելի է Խորենացու «Պատմութեան» Ա.լ գլխի բնագրի հետ (1913, էջ 83-84)*

*նայն երկիր չափեցին, ոչ ասացին զ'Ովկիանոս*[1]
*շուրջ լինել, այլ ի մի կողմանէ անկեան*[2] *հիւսի-*
*սա[յ]ին յարեւմտից, եւ ընդ հիւսիսի յարեւելս*
*կոյս տարածել <u>յերից</u>*[3] *մասանց* [3բ] *մասն մի. եւ*
*ընդ արեւմուտս ի հարաւ կոյս՝ ի չորից մասանց*
*յերիս մասունս. եւ ի նմանէ սկսեալ զԱնծանաւթ*
*երկրէ ասէ շրջապատեալ զբնակութիւն մարդ-*
*կան. եւ զերից ծովուցն՝ զՀնդկացն եւ զՅունացն*
*եւ զԿասբիցն, որ է Վրկանի, բնակութիւն մարդ-*
*կան ասէ լինել շուրջ զնոք<u>աւք</u>. եւ ճշմարիտ է:*
31 *Քանզի*[4] *զՅունականաւն եւ զԿասբիցն եւ ի*
*մէնջ մարդիկ շուրջ անցին. նոյնպէս վարկանիմ*
*եւ զՀնդկա[յ]ինն:* 32 *Եւ ո՛չ որպէս արտաքինքն՝*
*Դիոնէսիոս*[5] *եւ Ապողոն եւ ընկերք իւրեանց ա-*
*սեն՝ պարունակել Ովկիանոսի զամենայն:* 33 *Ո-*
*րում եւ Կոստանդիանոս*[6] *Անտիոքացի հանդիպի*
*վիճել [ընդ] ընկերս*[7] *իւր յԱստուածային Գրոց,*
*յորմէ ոչ տեսաք հատումն ինչ բան բանի պա-*
*տասխանելով. զի երկոքին գտանին յԱստուածա-*
*[յ]ին Գիրս՝ եզաբար եւ յոգնաբար ասացեալ.* Ժո-
ղովեսւ[ց]ին[8] ջուրքդ ի ժողով մի. եւ ի ժողովս իւ-
րեանց[a], *եւ թէ՝* Զժողովս ջուրցն կոչեաց ծովս[b]:

34 [9]*Իսկ յաղագս երկրի բնակելո[յ] մարդ-*
*կան՝ երկայնութեամբ յարեւելից յարեւմուտս, վա-*
*սն բարեխառնութեան*[10]. *եւ ի հարաւո[յ] եւ ի հիւ-*
*սիսո[յ]՝ անբնակ լինել, վասն սաստիկ ջերմոյ եւ*
*սառնամանեաց:* 35 *Նոյնպէս վիճել յԱստուածա-*
*յին Գրոց բան առ բան պատասխանի՝ այսպիսի*
*ինչ ասէ Աստուած ցՅոբ, թէ՝* [4ա] Խեղամո՞ւտ ի-
ցես լայնութեան առ ի ներքո[յ] երկնից, որչա՞փ
ից[է][11]. զի՞նչ երկիր իցէ՝ յորում լոյսն ագանի-
ցի[c]: 36 *Իբրեւ տարակուսեալ զնա, յաղագս հա-*
*րաւո[յ] անբնակին եւ հիւսիսո[յ] լերանց ձմեռնա-*
*ցելոցն, ընդ որովք թագել*[12] *կարծեմ զԱրեգակն:*
*Քանզի յառաջագոյն Սոփա՟րա[յ] Մինեցւ[ւ]ոյ*[13] *ա-*
*սացեալ էր, թէ՝ «Երկայն է չափ երկրի»՝ որպէս*
*զգիտակ բնակութեան մարդկան*[d]: 37 *Իսկ*[14] *ընդ-*
*դէմ այդոցիկ պատասխանեցին յԵսա[յ]եայ, թէ՝*
Հաստատեաց զերկիր բնակիլ[15] ի նմա[e]. *եւ*
*դարձեալ, թէ՝* Ոչ ի զուր ինչ արար զնա, այլ ի
բնակութիւն ստեղծ զնա[յ][16][f]:

38 *Իսկ ընդդէմ դոցա պատասխանի Դաւ-*
*թ՟ա[յ]*[17], *թէ՝* Զաշխարհ լրիւ իւրով դու հաստա-
տեցեր, զհիւսիս եւ զհարաւ[g]. *եւ Սողոմոն*[18] *ասէ.*
Տէր արար զշէնս եւ զանշէնս եւ զեզրս բնա-

1 *V* զյՈվկիանոս *փխ* զՈվկիանոս *(վեր. Սուքրեանի ըստ բազմաթիւ այլոց)*

2 *VS* անգեան *փխ* անկեան *(վեր. ըստ այլոց, տե՛ս նախ. Գ.3, 31)*

3 *Ըստ Երեմեանի՝ ճիշտ է* յերկուց՝ *ըստ համառօտի*

4 *Համառօտում Բ գլխի վերնագիրը վրիպմամբ բերուած է այս նախադասութիւնից առաջ. թերեւս, նախագաղափարում այն եղել է աջ երեսի ձախ լուսանցքում եւ համառօտող խմբագրի կողմից վրիպմամբ վերագրուել է ձախ երեսի բնագրին (ուր* Քանզի-*ն էլ, միգուցէ, ունէր կարմրատառ գլխատառ). վերականգնումը՝ Երեմեանի (1972). այս դիտարկումը թոյլ է տալիս պատկերացնել համառօտի նախագաղափարի (գուցէ եւ՝ հէնց հեղինակային սկզբնօրինակ գրչագրի) էջի մեծութիւնը. հմմտ. ստորեւ, նախ. Բ.1-ի ծնթ.*

5 *S* Դիոնեսիոս *փխ* Դիոնէսիոս *(V)*

6 *V* Կոստ֊, *S* Կոստանդին *փխ* Կոստանդիանոս *(վեր. ըստ նախորդի, տե՛ս նախ. Ա.28)*

7 *V* ընգերս *փխ* [ընդ] ընկերս *(վեր. Սուքրեանի. տե՛ս բարբառային* **Կ → Գ** *եւ հմմտ.* **ընդ – ընգ...***)*

8 *V* Ժողովեսին *փխ* Ժողովեսցին *(վեր. Սուքրեանի ըստ բազմաթիւ այլոց)*

a **Հմմտ. Ծն. Ը** *9*

b **Ծն. Ը** *10*

9 *V-ի* Ի-*ն կարմիր գլխատառով է՝ պարբ-ն նշան, որից առաջ Երեմեանը վերակ-նում է ենթավերնագիր.* «Յաղագս երկրի բնակելոյ մարդկան»

10 *V* բարէխառնութեան *փխ* բարեխառնութեան *(վեր. Սուքրեանի. հմմտ. նախ. Ե.239)*

11 *V* չափից *փխ* չափ իցէ *(վեր. Սուքրեանի)*

c **Յոբ, ԼԸ** *18-19*

12 *S* որով թագեալ *փխ* որովք թագել *(V)*

13 *V* սոփաէրա մենեցոյ, *S* Սովփարայ Մինեցւոյ *փխ* Սոփա՟րա[յ] Մինեց[ւ]ոյ *(վեր.՝ ըստ Յոբ, ԺԱ 1)*

d **Յոբ, ԺԸ** *9*

14 *V-ում* Ի-*ն գլխատառով է, կարմրով եւ կրկնակէտից յետոյ, որ պարբերութեան նշան է (ըստ ամենայնի՝ անտեղի)*

15 *S* բնակել *փխ* բնակիլ *(V)*

e **Հմմտ. Ես. ԽԵ** *18*

16 *V* զնայ *փխ* զնա *(վեր. Սուքրեանի ըստ միւսների)*

f **Ես. ԽԵ** *18*

17 *V* Դաւթեա, *S* Դաւթեայ *փխ* Դաւթ՟ա[յ] *(վեր.)*

g **Սաղմ. ՎԸ (ՎԹ)** *12*

18 *VS* Սաղոմոն *փխ* Սողոմոն *(վեր. ըստ յաջորդի, տե՛ս նախ. Ե.237)*

կեալս[h], եւ այլդ՝ նոյնպիսի: 39 Բայց հաւանեալ
եմ զարանցն Պտղոմ[ե]ա[յ][1], որք շուրջ եկին զԱյ-
րեցեալ գաւառաւն եւ զազգսն[2] շուրջ գրեցին
ճշդիւ[3] եւ զսահմանս ճարակաց նոցա՝ չափե[ա]լ
յԱկխսիմբա[յ], եւ զլուսնի լեառն եւ անդր եւս՝ Ան-
ծանաւթ երկիր, եւ շրջեալ առ Անծանաւթ երկ-
ր$^{ե}$աւ[4]՝ յՈվկիանոսէ մինչեւ յՈվկիանոս, եւ զեւս ա-
ռաւելն լռեցին, զոր ոչ կոխեաց ոտն մարդոյ:
40 Ըստ որում [4բ] ասի ի Յոբն, թէ՝ Ձգեաց զհիւ-
սիսի զոչնչիւ[5i], եւ թէ՝ Հրամաև պահեաց[6] զերե-
սաւք ջուրց[j], այսինքն թէ՝ Աստուծոյ հրամանն
բաւական է ունել զեզեր ջրոյն Անծանաւթ ծովու՝
ոչ պիտոյացեալ երկրի, եւ զեզեր[7] սպառուածի
Անծանաւթ երկրի՝ ոչ պիտո[յ]ացեալ ջրոյ:
41 Բայց եթէ շուրջ զԱնծանաւթ երկր$^{ե}$աւ[8] ծով եւ
շուրջ զԱնծանաւթ ծովով երկիր՝ մեք որպէս զան-
ծանաւթեալ լռեմք, եւ գրեմք միայն՝ զոր ետես ա-
կն եւ կոխեաց ոտն մարդոյ: 42 Եւ զառաւելսն
հրամանին Աստուածային[9] վարկանիմք հաւա-
տովք, որպէս ի վերայ երկրի՝ զոր տեսանեմք,
նոյնպէս եւ ի ներքո[յ] երկրի, ըստ Յոբայ, եթէ՝
Զերկիր ի վերայ ոչ$^{ը}$նչի հաստատեաց[k]. զոր եւ
Լուսաւորիչն հաստատէ՝ ի վերայ ոչ$^{ը}$նչի կառու-
ցեալ զերկիր. եւ զբան Սաղմոսին, որ ասէ՝ Ի վե-
րայ ծովու հիմունս արկ նմա եւ ի վերայ գետոց
պատրաստեաց զնա[l]՝ վարկանիմք ծակ[10] ի մի-
մեանս ծովուցդ, ըստ[11] սրբոյն Բարսղի. եւ ընդ
ամենայն հիմունս երկրի ջուրց ունել[12], ըստ այ-
նմ, թէ՝ Խորք որպէս զգեստ վերարկու է նորա[m]:
43 Եւ որպէս Աստուածաբան[13] ասէ, «Խորշք ծո-
վա[յ]ինք՝ ընդ երկիր եւ ընդ միմեանս միաւո-
րեալք»:

## [Բ.] 1 [Աշխարհագիր. Հատած Երկրորդ][14]

2 Արդ[15]՝ սկսցուք ըստ Պապա[յ] Աղէքսանդ-
ր[5ա]աց[ւ]ոյ[16] «Երկրագրութեան», որ ըստ ինք-
նագիր բոլորակին Կղաւդիու Պ[տ]ղոմեա[յ][17] «Տի-
եզերագրութեանցն չափուց», զոր սկսեալ յԱյրե-
ալ գաւտ[ւ]ոյն[18]՝ կրկնակի ի հիւսիսի եւ ի հարաւ:

3 [19]Եւ $^{յ}$Այրեալ[20] գաւտին սկսանի յԱնծա-
նաւթ յերկրէ Սի[ւ]նէաց[ւ]ոց[21], անցանելով ըստ

h Առակ. Ը 26
1 V Պտլոմա, S Պտլոմեայ փխ Պտղոմեայ (վեր. ըստ այլոց. օր.՝ Ա.30, Բ. 33, 37, Դ.33, Ե.206. մէկ տեղում ձեւը կրկնւում է)
2 S զաղդսն փխ զազգսն (V)
3 V ճժդիւ փխ ճշդիւ (վեր. Սուքրեանի. գուցէ, կարելի է վերականգնելի համարել ուղղակի ճշտիւ)
4 VS երկրեաւ փխ երկր$^{ե}$աւ (վեր.՝ ըստ յաջորդների, օր.՝ նախ. Բ.17, Դ.45, Ե.2, 76 եւն)
17 *ADEPv* Քեղ *փխ* Քաղ *(VS) (նախորդող* որո[յ] *բառի համար Սուքրեանի մօտ մի վրիպեալ ծանօթագրում կայ՝* «Յօր. *որ*»*. այն, թերեւս, պիտի վերաբերուէր մեր յաջորդ ծանօթագրութեանը)*

18 *S* եւ *փխ* որ *(V)*

19 *V* զտատիկազս ազնուաց ձոր, *S* զՏատիկ, զԱզնուացձոր, *AE* զՏատիկս, Աղուվանաց ձոր, *P* զՏատիկ, զԱզնուաձոր *փխ* զՏատիկս, զ"Ազնուաց ձոր *(վեր.)*

20 *VS չիք* զԳզեղ[ս] *(վեր.՝ ըստ համառօտի (*«զԽերհեթս, զԳզեղ»*).* [**ս**]*-ի յաւելումով՝ տե՛ս* **ս ... ս***)*

21 *Vv*[1] զսալա ձոր, *S* զՍալաձոր, *AEv*[1] զՍալնոյ ձոր, *Pv* զՍանոձոր *փխ* զՍալնաձոր *(v*[1]*)*

22 *VS չիք* եւ նաւթ *(վեր.՝ ըստ համառօտի, որտեղ* «նաւթ եւ երկաթ» *է. տե՛ս* երկ**աթ ... նաւթ***)*

23 *V* Տարւբերան *փխ* Տար[ո]ւբերան *(վեր. Սուքրեանի. ըստ Երեմեանի՝ վերականգնելի է* Տա[ւ]րուբերան [որ է կողմն Տարաւնոյ]*)*

24 *V* Ձորորդ *փխ* Ձորրորդ *(վեր. Սուքրեանի՝ ըստ այլոց. տե՛ս նախ. Ա.8, Ե.115 եւն)*

25 *V* ծ̅զ̅

26 *S* զԱսպականունեաց *փխ* զԱսպակունեաց *(V)*

27 *V* անգանի յԵփրաթ *փխ* անկանի յԵփրատ *(վեր. Սուքրեանի՝ ըստ այլոց, օր.՝ նախ. Ե.58, 307)*

28 *V* հիւսիւսոյ *փխ* հիւսիսոյ *(վեր. Սուքրեանի)*

29 *S* Սրմանց *փխ* Սրմանձ *(V)*

30 *Այս* լերամբ*-ից յետոյ V-ի գրիչը սխալմամբ ընդօրինակել է մի ողջ տող, որն իրականում յաջորդում է 3 տող յետոյ կրկնուող* լերամբ *բառին (*«մինչեւ ցնոյն Այծպտկունս, որ բաժանէ ընդ Կարին»*), բայց նկատել է եւ բոլոր բառերի վրայ խնամքով ուղղման կայծականձեւ նշաններ դրել*

*ղէդուխ[1] լեր$^{ե}$ամբ[2], մինչեւ ցնոյն Այծպտկունս, որ բաժանէ ընդ Կարին եւ ընդ նա, յորում գտանի սալակ եւ ձիղկ եւ նաւթ սեւ եւ սպիտակ. յորոյ յելից բ[ղ]խէ[3] Մուրց գետ, գնալով ընդ հիւսի՛սի[4]՝ իջանէ ի Բասէն[5] գաւառ եւ խառնի յԵրասխ եւ գետ[ա]ցուցանէ[6] զնա։* 135 *Յելի[ց][7] Մարդաղո[յ] է Դաստովոր[8] գաւառ, եւ ն[որ]ա[9] յելից՝ Տ[ո]ւարածատափ[10], [ե]ւ[11] նորա յելից՝ Դալառ. եւ ի հարաւո[յ] նոցա՝ Հարք եւ Վա[րա]ժնունիք[12], մինչեւ ցԱրածանի, որ իջանէ [յ]Ապահունեաց[13]։* 136 *Որոց ի հարաւո[յ] Սարակ՝ ի Բզ[ն]ունեաց[14] գաւառի, ի Նեխ[15] Մասեաց* [25ա] *սկսանելով՝ պատէ զարեւմտեա[յ] եզր հոմանուն ծովուն՝ մինչեւ ցբերդն Բաղէշ եւ անդր եւս ի հարաւ կոյս՝ ցԵրէվարք[16] գաւառի սահման։* 137 *Եւ Բզնունիք ունի յիւր հոմանուն ծովէն կղզիս երիս[17]՝ զԱրձկէոյն, զՑիպանին[18] եւ զՏոքեանն։* 138 *Որո[յ] ըստ հարաւո[յ], ի մէջ լերինն Տաւրոսի[19] եւ ծովու՝ գաւառ Երէվարք, յորում՝ լիճ ինչ, որ կոչի Եղիգի յու[ղ]խից[20], զի ի վարելն յակաւսն ջուր ըմպէ եզն, եւ սերման ելն[21] քառասուն[22] աւրն հասանէ եւ բերէ ընդ միո[յ] յիսուն[23]։* 139 *Եւ ծովն Բզնունեաց յերկայնն հարիւր[24] մղոն է, եւ լայնն՝ վաթսուն[25]։* 140 *Որո[յ] ըստ հիւսիսո[յ]՝ Աղիովիտ[26] գաւառ, եւ զմտիւք նորա [Ա]պահունիք[27], [որոյ ըստ Հարաւոյ՝ Կորի գաւառ, եւ ըստ Հիւսիսոյ՝ Խորխոռունիք][28], ընդ որոյ մէջն անցանէ Արածանի։* 141 *Յեզրն Բզնունեաց գտանի պստակ եւ կաստաննոն, որ է մաշկամիրգ[29], եւ մեղր՝ անոյշ քան զամենայն երկրի, եւ երկաթ [եւ սպիտակ նաւթ][30]։*

1 S Մեղեդուխ փխ Մեղէդուխ (V. Երեմեանի՝ վերականգնելի է Մեղեդու[ղ]խ)
2 V լերեամբ փխ լերամբ (վեր. Սուքրեանի, հմմտ. նախորդիւ, 2 ծնթ. վերեւ)
3 VS բխէ փխ բ[ղ]խէ (վեր. Երեմեանի՝ ըստ այլոց. տե՛ս, օր.՝ նախ. Դ.23, Ե.78, 119, 133, 206 եւն)
4 V հիւսիւսի փխ հիւսիսի (վեր. Սուքրեանի)
5 S Բասեն փխ Բասէն (V)
6 V գետցուցանէ փխ գետացուցանէ (վեր. Սուքրեանի. հմմտ. ստորեւ, նախ. Ե.178)
7 V յելի փխ Յելից (վեր. Սուքրեանի՝ ըստ այլոց)
8 VS Գաստովոր փխ Դաստովոր (վեր., տե՛ս բոլորագիր **Դ** → **Գ**. համառօտում Դաստարաւորք եւ Դասնաւորք է, իսկ Սուքրեանի ծնթ-նն է՝ «Ըստ այլ Օր. Դասնաւորք». բոլորը համադրելով՝ գուցէ, վերականգնելի է Դաստ[ն]աւոր[ք])
9 V նա փխ նորա (վեր. Սուքրեանի՝ ըստ այլոց)
10 V Տւարածատափ փխ Տուարածատափ (վեր. Սուքրեանի)
11 V ւ փխ [ե]ւ (վեր.) / S չիք [ե]ւ (V)
12 V Վածնունիք, S Վաժնունիք փխ Վա[րա]ժնունիք (վեր.՝ ըստ համառօտի. տե՛ս **Վա** – **րա**... եւ բոլորագիր **ժ** → **ծ**. վերջինիս համար հմմտ. նաեւ Վա[րա]ժնունիք ... ցԱրածանի. Սուքրեանի ծնթ-նն է. «Վարաժնունիք ըստ այլոց»)
13 V Ապահունեաց փխ յԱպահունեաց (վեր. Սուքրեանի՝ ըստ այլոց)
14 V Բզունեաց փխ Բզնունեաց (վեր. Սուքրեանի՝ ըստ այլոց, հմմտ. 4 տող ներքեւ՝ յաջորդ նախ.)
15 Սուքրեանի ծնթ.-ը՝ «Այսպէս յՕր. Մասիքդ այդ Սիփան լեառն է, որոյ մակդիր մի թուի Նեխդ»
16 VS ցԵրէվարդ փխ ցԵրէվարք (վեր.՝ ըստ յաջորդի, հմմտ. 4 տող ներքեւ՝ նախ. Ե.138. համառօտում՝ Երեւարք. Սուքրեանի ծանօթագրումն է. «Երեւարք որպէս ի ստորեւդ եւ ըստ այլոց»)
17 V գ̅, S երեք փխ երիս (վեր.՝ ըստ այլոց)
18 S զԾիպանին փխ զՑիպանին (V)
19 VS Տորոսի փխ Տաւրոսի (վեր.՝ ըստ այլոց. տե՛ս նախ. Ե.39, 53, 59, 150 եւ բանաւոր **ԱՒ/Օ** → **Ո**)
20 VS յուխից փխ յուղխից (վեր. Երեմեանի)
21 S սերմանեալն փխ սերման ելն (V)
22 V խ̅
23 V ծ̅
24 V ճ̅
25 V կ̅
26 V Աղիտվիտ, S Աղիտովիտ փխ Աղիովիտ (վեր., տե՛ս բոլորագիր **իո** → **իտ**)
27 V ն̅ր պահունիք փխ նորա [Ա]պահունիք (վեր. Սուքրեանի՝ ըստ նախորդի. տե՛ս նախ. Ե.135)
28 VS չիք որոյ ըստ ... Խորխոռունիք (2 տող) (պայմանական վեր.՝ ըստ համառօտի, ուր լոկ «Աղիովիտ, Ապահունիք, Կորի (DPv Կոր), Խորխոռունիք (AE Խորխորունիք)» թուարկումն է. տե՛ս Ապահ**ունիք** ... Խորխոռ**ունիք**. ոչ մեծ Կորի գաւառն, ըստ Թովմա Մեծոփեցու՝ ընկած էր Սիփանի հիւսիսային լանջերին, իսկ Խորխոռունիքի իրական տեղորոշումն Ապահունիքից հիւսիս է՝ Արածանիի մէջ ձախից թափուող Մալխաս-ի հովտում, հմմտ. Խորխոռունի = **Մաղխազ**ունի)
29 V մաշտամիրք փխ մաշկամիրգ (վեր. Սուքրեանի՝ ըստ համառօտի, որի թուարկումն է. «գազպեն, եւ մեղր եւ մաշկամիրգ եւ պիստակ». տե՛ս նաեւ բարբառային **Գ** → **Ք**. Սուքրեանի ծանօթագրումն է. «Յօր. Մաշտամիրք»)
30 VS չիք եւ սպիտակ նաւթ (վեր.՝ ըստ համառօտի, որտեղ «երկաթ եւ նաւթ» է կամ «սպիտակ նաւթ եւ երկաթ». տե՛ս երկ**աթ** ... ն**աւթ**)

142 Ասեն, թէ ն̄հանգ[1] կա[յ] յԱրածանի՝ որպէս [յ]Եփրատ[2]. զոր հաւաստի գիտեմք՝ կենդանիս[3] քարքաշամ զուգեալ, զարիւնն ծ̄ծեալ եւ թողեալ: 143 Զոր ոմանք ասեն, թէ գազան է. եւ չէ դեւ, այլ՝ գազան, զոր Յոհանն[4] վասն դստերն Հերոդիադա[յ] ասէ, թէ՝ «Քան զն̄հանգսն[5] ծովա[յ]ինս արիւնարբու էր»:

144 **Ե.** Աշխարհ Մո[կ]ք [յ]ելից[6] կան Աղձնեաց[7], ի լերինն Տաւ[25բ]րոս[8]: 145 Ունի գաւառս ինն[9]՝ զԻշայր, [զմիւս Իշայր][10], զԻշուց գաւառն, զԱռ[ո]ւենէից[11] ձոր, զՄիջաց[12], զԱռանձնական Մոկաց գաւառն, յորում՝ գետն Որբ, զԱրքա[յ]ից գաւառ, զԱրգովտեաց ովիտ[13], [զ]Ջերմաձոր[14], յորում՝ գետն Մերմ[15]: 146 Ունի ի մրգաց՝ զարշատ[16] եւ մանրագոր, եւ ի գազանաց՝ ինձ գեղեցկախայտ[17], [եւ ի[18] հաւուց՝ կաքաւս][19]:

147 **Զ.** Կորճէք յելից կան Մոկաց, [առ Ասորեստանեաւ][20]: 148 Ունի գաւառս [մե]տաս[ա]ն[21]՝ զԿորդուս, յորում՝ Թման առ Ասորեստանեաւ, զԿորդիս Վերի, զԿորդի[ս][22] Միջի, զԿորդիս Ներքի, զԱյտ[ո]ւանս[23], զ[Ջ]ա[ւ] գա[ւա]ռս[24], զ[Մ]ոթողանս, զՈրսի[ր]անս[25], զՍարապոնիս[26], զՃահուկ, զՓոքր Աղբակք: 149 Ունի զառիկ, եւ ի պտղոց՝ ̄շահդանակ[27], այսինքն՝ գանգար փշո[յ] սերմն:

1 V նահանգ փխ նհանգ (վեր. Սուքրեանի)

2 V Եփրաթ փխ [յ]Եփրատ (վեր. Սուքրեանի՝ ըստ միւսների. հմմտ. նաեւ նախ. Ե.91, 113, 174)

3 S կենդանի փխ կենդանիս (V)

4 S Յոհան փխ Յոհանն (V)

5 V նահանգսն փխ նհանգսն (վեր. Սուքրեանի)

6 V Մոք ելից փխ Մոկք յելից (վեր. Սուքրեանի)

7 V Ախձնեաց փխ Աղձնեաց (վեր. Սուքրեանի. տե՛ս նախ. Ե.115, 130, 210 եւ բանաւոր **Ղ** → **Խ**)

8 VS Տորոս փխ Տաւրոս (վեր.՝ ըստ այլոց, տե՛ս նախ. Ե.39, 53, 59, 150 եւ բանաւոր **ԱՒ**/**Օ** → **Ո**)

9 V թ̄

10 VS չիք զմիւս Իշայր (վեր. Երեմեանի՝ ըստ համառօտի. տե՛ս **Իշայր** ... **Իշայր**)

11 VS զԱռվենէից, AEPv զԱռուենից փխ զԱռ[ո]ւենէից (վեր.՝ ենթադրելով, որ **վ**-ն **ւ**-ի փխն. դրել է գրիչը՝ սկզբի **առ**-ն իբրեւ նախդիր ընկալելով)

12 VS զՎիջաց, AEPv զՄիջա փխ զՄիջաց (վեր., տե՛ս ուշ երկաթագիր **Մ** → **Վ**. Սուքրեանի ծանօթագրումն է. «Միչա ըստ այլոց»)

13 Համառօտը՝ զԱդաստեայ ովիտ, զԱրգաստովիտ

14 VS Ջերմաձոր փխ [զ]Ջերմաձոր (վեր.)

15 Ըստ Երեմեանի՝ վերակ-նելի է **Ջ**երմ փխն. **Մ**երմ

16 Համառօտում արշակ է եւ գահրշակ (վերջինս աւելի հաւանական է համարում Երեմեանը)

17 V գեղէցկախայտ փխ գեղեցկախայտ (վեր. Սուքրեանի. համառօտում գեղեցկախայտուց է)

18 AE չիք ի (DPv)

19 DPv զկաքաւ փխ կաքաւս (AE) / VS չիք եւ ի հաւուց՝ կաքաւս (վեր. Երեմեանի՝ ըստ համառօտի. տե՛ս բոլորագիր գեղեցկախայտ ... կաքաւս)

20 VS չիք առ Ասորեստանեաւ (վեր. Երեմեանի՝ ըստ համառօտի, ուր առ Ասորեստանի է, բայց հմմտ. յաջորդ տողում եւ վերեւում՝ նախ. Ե.115)

21 V ծ̄ [=տասն] փխ մետասան (վեր. Սուքրեանի՝ ըստ համառօտի՝ գաւառների ճիշտ քանակով)

22 VS զԿորդի փխ զԿորդի[ս] (վեր.)

23 VS զԱյտւանս փխ զԱյտ[ո]ւանս (վեր.)

24 VSPv զԱյգաոս, v[1] զԱյ [այլ գրչագրեր զԱղ, զԱգ, ADE չիք] փխ զ[Ջ]ա[ւ] գա[ւա]ռս (վեր.՝ համարելով, որ «նախ՝ որեւէ վաղ արտագրող, ամենայն հաւանականութեամբ, վրիպել է բառասկզբում կրկնուող Զ-երից մէկը, ապա՝ գրիչների մօտ յաճախ նկատուող անկանոն գրութեան հետեւանքով Ա-ից յետոյ աւելացուել է Յ տառ, որը յաջորդ գրչին պատճառ է տուել՝ առաջացած «Զայ» բառի վերջում վրիպելու Յ-ից յետոյ եւ գաւառ-ից առաջ դժուար լսելի դարձած Ւ տառը: Վերջապէս՝ համառօտ խմբագրութիւնը կազմելիս «խոտանուել» է հարեւան անուններում բացակայող գաւառ բաղադրիչը, թէպէտ իրականում «Աշխարհացոյց»-ի հեղինակը, հաւանաբար, հիմք է ունեցել ընկալելու այն հէնց իբրեւ տեղանուան բաղադրիչ ո՛չ միայն այս, այլեւ ուրիշ դէպքերում՝ նշելով, օր.՝ «զՄարի գաւառ», «զԹրաբի գաւառ»... Իսկ ընդարձակ խմբագրութեան միակ գրչագրում կամ նրա մայրում տեղի է ունեցել նախագաղափարի՝ հաւանաբար, յապաւուած Ա ձայնաւորով գաւ[ա]ռ բառի Ւ-ի վրիպումն ու մնացորդի ընկալումը իբրեւ նախորդի -գառ բառավերջ...» (Յակոբեան, 2009, էջ 292-293). հմա՛ վաղ շրջանի Ծաւդէք – Զաւդէք – Զաբդիկէնէ – Բեթ Զաւդայ մարզը՝ այլուր կոչուած նաեւ Կորտայա, Կորդիք եւ Կադմեանք)

25 VS զՈթողանս, զՈրիսանս փխ զ[Մ]ոթողանս, զՈրսի[ր]անս (վեր.՝ ըստ համառ., AE Մոթղանս)

26 Համառօտում՝ զԿարատունիս, զԿարաթունիս, զԿարապունիս, զԿարթունիս. հմմտ. ներկայիս Սարայնիւս գիւղանուան հետ՝ Զղմար-Զուլամերկից հարաւ, Մեծ Զաբի ձախ ափին

27 V աշահդանակ փխ շահդանակ (վեր. Սուքրեանի՝ ըստ համառօտի (DPv. AE շահնդակ), ուր չիք «այսինքն ... սերմն» վերջը. ՆՀԲ-ում՝ շահգանակ)

150 *Է. Պարսկահայք՝ յելից Կորճէից, եւ ցաղիտատաբար[1] մտանէ ընդ մէջ Ատրպատ[ա]կանի[2] եւ լերինն Տաւրոսի՝ այնր կողման, որ կոչի Կոհ-ի Նիհորական, մինչեւ ցԵրասխ[3] գետ:* 151 *Ունի գաւառս ինն[4]՝ զԱյլի, որ կոչի Կուռիճան, զՄարի գաւառ, զԹրաբի գաւառ, զԱ[ւ]րիսի[5], որ է Ովէա[յ][6], զԱռնա[յ], [զ]Տամբէր[7], [զ]Զարէհ[ո]ւան[8], զՁ^բ^արաւանդ[9], զՀեր:* 152 *Ունի յերէոց զցիռ եւ զայծեամն:*

[26ա] 153 *Ը. Վասպուրական՝ ի մտից Պարսկահայոց եւ առ երի Կորճէից:* 154 *Ունի գաւառս երեսուն եւ հինգ[10]՝ զՌշտունիս, որ է ընդ Մոկաց*

1 *VS* ցազիտատաբար *փխ* ցաղիտատաբար *(վեր., Սուքրեանը բառի մօտ հարցական է դրել, բայց Գ. Աբգարեանի դիպուկ դիտարկմամբ (ՊԲՀ, 1961, հմր 1, էջ 185)՝ համեմատութիւններ սիրող մեր հեղինակը կիրառել է լատիներէն՝ «աղեղ» կամ «նետ» նշանակող* sagitta *եզրոյթը, որը եւ կարող էր վերածուել* ցաղիտատաբար *ձեւի՝ «աղեղնաձեւ» իմաստով. տե՛ս բոլորագիր* **ղ → զ***)*

2 *V* Ատրապատկանի, *S* Ատրպատականի *փխ* Ատրապատ[ա]կանի *(վեր., հմմտ. նախ. Ե.115, 247. համառօտում* «առ Ատրպատականիւ» *է)*

3 *Ըստ Երեմեանի՝* ց**Ա**րասխ *(որ հաւանական չէ)*

4 *V* թ̅

5 *VS* զԱրիսի, *ADEPv* Ացուերս *[ՄՄ մի քանի գրչագիր՝* Այուերս, Ուեւս, Ըցտեւ*]* *փխ* զԱ[ւ]րիսի *(վեր.՝ համառօտի հիմքում ենթադրելով* *Աւրէսի, *որից ծագել են* *Արուէսի → *Ար[ո]ւէս → Ա[յ]ուերս → Ացուերս, *տե՛ս բոլորագիր* **աւ → ա**, *ուշ երկաթագիր* **Յ → Ց** *եւ անկանոն գրութեամբ* **Ա → ԱՅ**. *հմմտ. ներկայիս* **Աբրի**շիմ *լեռնանուան հետ՝ Զարասպ լեռնագագաթից Ուրմիայի լճեզր իջնող սահմանային լեռնաշղթայի վրայ)*

6 *Թերեւս, վեր-լի է՝* Որ**մ**էա[յ] *կամ* Ով[ր]էա[յ] *փխն.* Ովէա[յ] *(ADEPv չիք* որ է Ովէա*). տե՛ս ուշ երկաթագիր* **ՈՐՄԷ → ՈՎԷ** *կամ* **Վ^Ր^Է → ՎԷ** *եւ հմմտ. Լէոնտի Մոովէլու* **Որ**էթի *լեռնանուան հետ (Մէլիքսեթ-Բէկ, Ա, էջ 144-145), որը Թարգամոսի եւ Հայոսի երկրի հարաւային սահմանն էր, համադրելի՝* **Որ**մի-Ուրմիա *տեղանուան հետ*

7 *VS* Տամբէթ, *ADEPv* Տամբերս *փխ* [զ]Տամբէր *(վեր., տե՛ս ուշ երկաթագիր* **Ր → Թ**. *«Զօրանամակ»-ի ու «Գահնամակ»-ի տոհմանունները նման են համառօտին՝* Տամբերացի *եւ* Տամբարացի*)*

8 *VSDv* Զարէհւան, *AEP* Զարեհաւան *փխ* [զ]Զարէհ[ո]ւան *(վեր.՝ ըստ այլոց)*

9 *V* զզքարաւանդ *փխ* զՁարաւանդ *(վեր. Սուքրեանի՝ ըստ համառօտի)*

10 *V* լ̅ե̅

*եւ ծովուն Բ^ու^[զ]նունեաց[11], յորում՝ կղզիք երկու[12]՝ Ախթամար եւ Արտի, եւ ցամաքակղզին Մանզկերտ. եւ [զ]Տոսպ[13]՝ յելից Բզնունեաց. զԲոդո[ւ]նիս[14]. զԱրճիշակովիտ[15]. [[զ]Կուղանովիտ. [զ]Բառիղովիտ][16]. զԴառնի՝ մինչեւ ցգաւառն Կոգովիտ, որ յոտինն՝ Ազատ Մասեաց. զԱռբերան[ի][17]՝ յելից ծովուն Բզնունեաց, յորում՝ կղզիք Զքատան եւ Լիմն, ցամաքակղզին Ամիկ եւ Առեստովան[18], ուստի ելանէ ձուկն:* 155 *Եւ յելից դոցա՝ [զ]Բուժունի[19], զԱռնո[յ] ոտն[20], զԱնձովացիս[21], զՏրպատունիս, զԵրուանթունիս[22], [զԿր-*

11 *V* Բունունեաց *փխ* Բզնունեաց *(վեր. Սուքրեանի՝ ըստ բազմաթիւ այլոց)*

12 *V* բ̅

13 *V* տոստ, *S* Տոսպ *փխ* [զ]Տոսպ *(վեր.՝ ըստ այլոց)*

14 *VS* զԲոդոնիս, *AE* Բոդունիք, *DPv* Բուդունիք *փխ* զԲոդո[ւ]նիս *(վեր., ցուցէ՝ վերականգնելի է Թովմայի* Բոգունիք *ձեւը, ինչպէս համարում է Երեմեանը. տե՛ս բոլորագիր* **գ → դ***)*

15 *S* զԱրճիշահովիտ *փխ* զԱրճիշակովիտ *(V. նոյն* **կ**-*ով է նաեւ համառօտում)*

16 *VS չիք* [զ]Կուղանովիտ. [զ]Բառիղովիտ *(վեր.՝ ըստ համառօտի. տե՛ս* զԱրճիշակ**ովիտ** … զԲառիղ**ովիտ**. *համառօտում բացակայող* **զ** *նախդիրի վերականգնել ենք ըստ V-ի այլոց եւ հակառակ հերթականութեամբ ենք դրել՝* «Բառիղովիտ (*Pv* Աղովիտ, *D* Բալախովիտ), Կուղանովիտ (*D* Կուզանովիտ)», *ելնելով իրական աշխարհագրական հերթականութիւնից (որը հեղինակը Վասպուրականը նկարագրելիս յստակ է պահպանում). համառօտի խմբագիրը յաճախ է հարեւան գաւառանունների տեղերը փոխում, թերեւս՝ զոյգերով ինքնաթելադրութեան բովում)*

17 *VS* զԱռբերան *փխ* զԱռբերան[ի] *(վեր.՝ ըստ համառօտի. տե՛ս գրչի վրիպեալ վարկածով՝* «զԱռբերան ^ի^ յելից»*)*

18 *Սուքրեանի տողատակն է.* «Այն է Առեստ աւան»

19 *VS* Բուժունի *փխ* [զ]Բուժունի *(վեր.՝ ըստ այլոց. համառօտում* Բուժունիք *եւ* Բժունիք *է)*

20 *V* զառնօ՛ ոտն, *S* զԱռնոյ-ոտն *փխ* զԱռնո[յ] ոտն *(վեր.՝ ըստ համառօտի. գրիչն էլ է նկատել սխալը եւ* **օ**-*ի վրայ դրած կայծակնաձեւ նշանով, փաստօրէն, վերականգնել նախագաղափարի* **ո**-*ն)*

21 *Միգուցէ, վերականգնելին համառօտի* Անձաւացիք *եւ* Անձեւացիք *տարբերակներից մէկն է*

22 *V* զէրուանթունիս, *S* զԵրուանդունիս *փխ* զԵրուանթունիս *(վեր., տե՛ս երկաթագիր եւ բոլորագիր* **Ե → Է**. *համառօտում* Երուանթունիք *եւ* Երի**թ**ունիք *է,* **թ**-*ով է նաեւ՝ «Գահնամակ»-ում* (Եր**մ**ան**թ**ունի) *եւ «Զօրանամակ»-ի մի տարբերա-*

*ճունիս*[1], *զՄ[ե]ծնունիս*[2], *զՊալունիս]*[3], *զՄարդա[ս]տան*[4], *զԱրտազ մինչ ի Կ[ո]գո[վ]իտ*[5]:
156 *Եւ յելից դոցա՝ զԱկէ, զԱղբակ մեծ, զԱնձահիձոր, զԹոռնաւան, զճ[ո]ւաշ[ռ]ոտ*[6] *մինչեւ ցԵրասխ,* գ··· *զԳոկան*[7], *զԱղանդռոտ, զՊա[տ]սպարունիս*[8], *զԱր[տ]աշեզան*[9], *զԱրտաւանան, զԲագան*[10], *զԳաւեթան, զԳազրիկանս, զՏագրեանս, զՎա[րա]ժնունիս*[11], *[[զ]Գողթն գինեւէտ]*[12], *զՆախճ[ո]ւան*[13], *յորում՝ հոմանուն քաղաք [եւ Մարա[ւ]ան [քաղա]քն]*[14]:

157 *Թ. Աշխարհ՝ Սիւնիք, ընդ մէջ կալով Երասխա[յ] եւ Արձախա[յ]՝ յելից Այրա*ᵏ*րատո[յ]*[15]:
158 *Ունի գաւա*[26բ]*ռս երկոտասան. զԵրնջակա[յ]*[16], *զճահուկ, զՎայ*ᴸ*ո[յ] Ձոր*[17], *զԳեղարքունի*[18]*՝ զհոմանուն*[19] *ծովովն, զՍո*ᵘ*թս*[20], *զԱղահեճ*[21], *զԾղուկն*[22], *զՀաբանդ, զԲաղս, զՁորա[յ],*

---

*կում* (Երանթունի). *Սուքրեանը հետեւել է Թովմային)* / *VS* զԱնձովացիս, զՏրպատունիս, զԵրուանթունիս, զԱռնո[յ] ոտն *փխ* զԱռնո[յ] ոտն ... զԵրուանթունիս *(վեր.՝ ըստ համառօտի հերթականութեան, որը* «Առնոյոտն (*AE* Առնիոյտ), Անձեւացիք (*AE* Անձաւացիք), Տրապատունիք (*DPv* Ատրպատունիք), Երուանթունիք (*Pv* Երիթունիք)» *է. թերեւս՝ V-ի գրիչն իր տեղում վրիպել է* զԱռնոյ ոտն-*ը, ապա հասնելով* զԵրուանթունիս-*ին՝ նկատել է դա եւ գրել հէնց վերջինից յետոյ)*

1 *V* զրկճունիս, *S* զԿըրկճունիս *փխ* զԿրճունիս *(վեր., տե՛ս* զ**կր** → զ**րկ***)*

2 *VS* զՎժնունիս *փխ* զՄ[ե]ծնունիս *(վեր.՝ ըստ համառօտի, ուր* Մեծնունիք *է. տե՛ս ուշ երկաթագիր* ***Մ*** → ***Վ*** *եւ* ***Ծ*** → ***Ժ****, իսկ* **ե**-*ի սղումն՝ ըստ նախորդ* զԿրճունիս-*ի գաղտնավանկի զուգորդութեան)*

3 *VSAEPv աստ չիք* զԿրճունիս, զՄ[ե]ծնունիս, զՊալունիս *(վեր. 4 տող ներքեւից՝ ելնելով աշխարհագրական հերթականութիւնից, որը հեղինակը Վասպուրականը նկարագրելիս յստակ է պահպանում, եւ ենթադրելով, որ դեռ մինչեւ համառօտի խմբագրումը մի վաղ գրիչ իր տեղում վրիպել է այս 3 անունը (տե՛ս* զԵրուանթ**ունիս** ... զՊա**լունիս**), *ապա* Գոկան-*ից առաջ նկատել է դա եւ տեղադրել հէնց այդտեղ. հմմտ. +4 ծնթ.)*

4 *V* զՄարդատան *փխ* զՄարդաստան *(վեր. Սուքրեանի. ըստ Երեմեանի վարկածի՝* «[զԲուն Մարդաստան], զՄարդաստան»*)*

5 *V* Կգօ̄իտ *փխ* Կոգովիտ *(վեր. Սուքրեանի՝ ըստ նախորդի, տե՛ս 7 տող վերեւում)*

6 *VS* զԹոնրաւան, զճւաշոտ *փխ* զԹոռնաւան, զճ[ո]ւաշ[ռ]ոտ *(վեր.՝ ըստ համառօտի, Թովմայի եւն. Սուքրեանը երկու անունն էլ ծանօթագրել է.* «Այլք *Թոռնաւան*» *եւ* «Այլ օր. *Ճուաշոտ*»*)*

7 *VS* զԿրճունիս, զՎժնունիս, զՊալունիս, զԳոկան, *ADEPv* Կրճունիք, Մեծնունիք, Պալունիք, Գուկան *փխ* զԳոկան *(վեր., հմմտ. 4 ծնթ. վերեւում)*

8 *VS* զԱղանդոստ, զՊասպարունիս *փխ* զԱղանդռոտ, զՊա[տ]սպարունիս *(վեր.՝ ըստ համառօտի,* «*Զօրանամակ*»*-ի, Թովմա Արծրունու եւն. տե՛ս բոլորագիր* **ռո** → **ոս**. *Սուքրեանի ծանօթագրումն է.* «Այլք *Սղուանդոտ, Պատսպարունիք... Գաբիթեան... Վարաժնունիք*»*)*

9 *V* զԱրաշեզան *փխ* զԱրտաշեզան *(վեր. Սուքրեանի՝ ըստ համառօտի, ուր* Արտաշեան *եւ* Արտաշէզեան *է)*

10 *Ըստ Երեմեանի վարկածի՝* «զԱրտաշիսեան, [որ է Արտաւանեան], զԲաք[ր]ան, [որ է] Մարանդ»

11 *VS* Վաժնունիս *փխ* Վա[րա]ժնունիս *(վեր.՝ ըստ համառօտի. տե՛ս* **Վա-րա**...*)*

12 *VS չիք* [զ]Գողթն գինեւէտ *(վեր.՝ ըստ համառօտի,* **զ** *նախդիրի յաւելումով՝ ըստ V-ի այլոց)*

13 *V* զՆախճւան, *S* զՆախճաւան *փխ* զՆախճ[ո]ւան *(վեր., համառ.՝* Նախճաւան, Նախճուան*)*

14 *VS չիք եւ* Մարա[ւ]ան [քաղա]քն *(վեր.՝ ըստ համառօտի (տե՛ս* **քաղաք** ... **քաղաք**ն), *որի ընթերցումներն են՝* Մարմարան**քն**, Մարմանդ**քն**, Մարմար**սն**, Մարմար**ոն**, Մարման**ոք**, Մարմանտ**ոք**, Մարանդ, Մագանդ. *ենթադրելի է, որ վերջում* **քն** *տառերը պահպանած այդ խաթարուած բնագրում մեր կողմից վերականգնուող* «Մար**աւան**» *քաղաքը նոյնն է ստորեւ՝ Այրարատի գլխում յիշուած* Մաւնա քաղաք-*ի հետ* (<Մար[ա]ւ[ա]նա[յ] քաղաք), *ինչպէս նաեւ՝ Խորենացու Ա.լ գլխի* Մար**ակերտ**-*ի եւ Ստրաբոնի XI, 14, 6 գլխի* Արքսատա-Մար**աշատ**-*ի* (Ἄρξατα < *[Μ]άρ[α]ξατα). *հմմտ. Յակոբեան, 2009, էջ 231-232)*

15 *V* Այրայրատո *փխ* Այրաᵏրատո[յ] *(վեր. Սուքր-նի)*

16 *V* զԵրնջակա, *S* զԵրնջակ *փխ* զԵրնջակա[յ] *(վեր., համառօտում* Երնջակ *է)*

17 *V* զմայլո ձոր, *S* զՎայոցձոր *փխ* զՎայᴸո[յ] Ձոր *(վեր., տե՛ս ուշ երկաթագիր* ***Վ*** → ***Մ*** (*հմմտ. նախ. 155՝* զ**Մ**[ե]**ծ**նունիս → զ**Վժ**նունիս) *եւ բոլորագիր* **ոյ** → **լո**. *Այրարատի գլխում V-ն ունի* հա[յ]ո ձորո. *համառօտում* Վայու ձոր *եւ* Վայոց ձոր *է. Սուքրեանի վրիպակով ծնթ-ը՝* «Յօր. *Մայրոձոր*»*)*

18 *V* զԳեղարգունի *փխ* զԳեղարքունի *(վեր. Սուքրեանի՝ ըստ AE-ի, DPv-ում՝* Գեղաքունի *է)*

19 *S* հոմանուն *փխ* զհոմանուն *(V. գուցէ, գրիչը կամեցել է գրել* «զհոմանուն ծովն», *ինչպէս որ համառօտում է՝* «Գեղարքունի եւ ծովն», *թէպէտ, ի վերջոյ, կիրառել է գործիականը՝* ծովովն*)*

20 *VS* զՍոսթս *փխ* զՍոᵘթս *(վեր.)*

21 *S* զԱղահէճ *փխ* զԱղահեճ *(V)*

22 *V* զԾգուկն *փխ* զԾղուկն *(վեր. Սուքրեանի, տե՛ս բոլորագիր* **ղ** → **գ**. *համառ.՝* Ծղուկք *է եւ* Ծղակ*)*

*զԱրեւիս, զԿաւսական[1] մինչեւ ցՆակորզեան քաղաք, [ց]անցն իւր[2]՝ հոմանուն գետովքն[3], եւ [ց]Աղաւնո[յ][4] գետ։* 159 ***Լինի [ի Նմա][5] մուրտ եւ [գ]երերի[6] եւ նուռն ազնիւ, [եւ ամուր տեղիք][7]։***

160 ***Ժ.՝ Արցախ[8], յերի կալով Սիւնեաց.*** *ունի գաւառս երկոտասան[9]. զՄիւսն Հաբանդ, զՎակունիս, զԲերձոր, զՄեծիրանս, [զ]Մեծկուանս[10], զՀարճղա՛նս[11], զՄուխանս, զՊիանս, զՊածկանս, զՍիսական-ի" զԿոտակ[12], զՔուստ-ի Փառնէս[13], զԿողթ[14], յորում լինի քարախունկ[15]։* 161 *Զայս ամենայն Աղուանք ունին՝ հանեալ ի Հա[յ]ոց։*

162 ***[ԺԱ.՝ Փայտակարան. յելից կայ Ուտիոյ առ Երասխաւ։*** 163 ***Գաւառս ունի երկոտասան, զոր այժմ Ատր[ա]պատական ունի[16]. Հրաքոտ Պերոժ, Վարդանակերտ, Եւթնփորակեան բագինն, Քոեկեան[17], Ռոտ-ի Բաղա[յ], Բաղանռոտ, Առոս, Պիժան[18], Հանի[19], Աթշի Բագաւան[20], Սպանդարան Պերոժ[21], Որմզդ-ե Պերոժ[22], Ալեւան[23]։*** 164 ***Լինի ի Նմա բամբակ անբաւ, եւ գարի ինքնաբոյս։***

165 ***ԺԲ.՝ Ուտի. առ[24] մտից կայ Երասխայ, ընդ[25] մէջ Արցախայ եւ Կուր գետոյ։*** 166 ***Ունի[26] գաւառս, զոր Աղուանք ունին՝ ութն[27].***

---

1 *V-ում*՝ զԿօսական, *համառօտում*՝ զԿաւսական *եւ* զԿուսական, *Օրբէլեանի մօտ միշտ*՝ Կովսական

2 *VS* անցնիւր *փխ* [ց]անցն իւր *(վեր.՝ ըստ քերականութեան, հմմտ.* ցՆակորզեան..., ցանցն*)*

3 *S* գետովք *փխ* գետովքն *(V)*

4 *V* Աղաւնո, *S* Աղաւնոյ *փխ* [ց]Աղաւնո[յ] *(վեր., հմմտ.* ցՆակորզեան..., ցանցն..., ցԱղաւնոյ. *չվերականգնելով էլ՝ քերականօրէն ընկալելի է, որ հեղինակը դրել է հէնց «[ց]-» – «մինչեւ» իմաստը)*

5 *VS չիք* ի նմա *(վեր. Երեմեանի՝ ըստ համառօտի. հմմտ. նախ. Գ.17, Ե.177, 316)*

6 *VS* երերի *փխ* [գ]երերի *(վեր.՝ ըստ համառօտի. Սուքրեանի ծանօթագրմամբ՝* «Գերերի ըստ այլոց, զոր հին Բժշկարան աս է լինել *Քիմէ*»*)*

7 *A* արմտիք, *E* ամուրտեիք *փխ* ամուր տեղիք *(DPv) / VS չիք* եւ ամուր տեղիք *(վեր. Երեմեանի՝ ըստ համառօտի, որը չունի նախորդ* ազնիւ-*ը)*

8 *V-ում բառասկզբի գլխատառ* Ա-*ի վերեւում կայծակնաձեւ նշան է դրուած եւ կողքի լուսանցքում ուշ ձեռացագրով, 2 տողով, երկար պատուոյ նշանների մէջ ծանօթագրուած է.* «Աշխարհ խաչ/էնք է» *(առաջին բառը՝ պատուոյ նշանի տակ դրուած ալիքաձեւ գաղափարագրով)*

9 *V* ժ̄բ̄

10 *VS* Մեծկուանս *փխ* [զ]Մեծկուանս *(վեր.՝ ըստ այլոց. միայն DPv-ում հերթականութիւնը հակառակն է.* «Բերդաձոր, Մեծկուանք, Մեծիրանք»*)*

11 *VS* զՀարճղաւնս *փխ* զՀարճղա՛նս *(վեր.՝ ըստ համառօտի, ուր Հարջլանք է եւ Հարճլանք. տե՛ս ուշ երկաթագիր* **Ա** → **ԱՒ***. հմմտ. նախ. Ե.109)*

12 *VS* զՍիսականիս, զԿոտակ *փխ* զՍիսական-իս զԿոտակ *(վեր., ենթադրելով, որ* **ս** *վերջածանցը եւ* **զ** *նախդիրը յաւելել է մեր գրիչը. համառօտի AE-ում* Սիսականք, Քուակք *է, DPv-ում*՝ Սիսական ոստանն *(այլ ՋՋ-ում նաեւ*՝ Սիսականք քոտակ, Սիսականք կոտայք *եւն, տե՛ս Յարութիւնեան, 2007, էջ 23*), իսկ նախ. Ե.109-ում*՝ Սիսական ոոտաստակ, Սիսական ըստիսականն *եւն)*

13 *VS* զՔուստիփառէնս *փխ* զՔուստ-ի Փառնէս *(վեր.՝ ըստ համառօտի (Դասխուրանցու մօտ* Քաւստ-ի Փառնայ *է). հմմտ. նախ. Ե.109)*

14 *VS* զԿոխտ *փխ* զԿողթ *(վեր.՝ ըստ նախորդի, տե՛ս նախ. Ե.109. հմմտ. բանաւոր* **ՂԹ** → **ԽՏ***)*

15 *V* քարախունգ *փխ* քարախունկ *(վեր. Սուքրեանի՝ ըստ այլոց, տե՛ս նախ. Ե. 20, 40, 58, 177, 312)*

16 *A* Ունի գաւառս երկոտասան, *E* Ունի գաւառս, զոր այժմ Ատրպատականն ունի՝ երկոտասան *[տե՛ս* **ունի ... ունի***] փխ* Գաւառս ... Ատր[ա]պատական ունի *(DPv.* [ա]-*ն՝ ըստ նախ. Ե.115,150,247)*

17 *Pv* բագինք, *Dv²* բագինք ունի *փխ* բագինն, Քոեկեան *(AEv². նահանգի գաւառների՝ 12 թիւն ստանալու համար, գուցէ, պէտք է ընթերցել* «Եւթնփորակեան բագինն Քոեկեան». *Երեմեանի լուծումն այլ է՝* «Ռոտ-ի-Բաղա, [որ է] Բաղան-ռոտ»*)*

18 *AE* Ռովտիբաղա, Քաղանռոտ, Բոռոս, Պիճան, *v²* Ովտիբաղայ, Քաղանոստ, Բուռոս, Պիճան *փխ* Ռոտ-ի Բաղայ ... Պիժան *(DPv) /* $v_{in}$ Բիժան

19 $v^1v_{in}$ Հանհանի *փխ* Հանի *(ADEPv)*

20 *AEP* Աթլի, Բագաւան *փխ* Աթշի Բագաւան *(v². արդեօ՞ք վերականգնելի է՝* Աթշ-ի Բագաւան*)*

21 *v²* Սպանդարան, Եպերոյ *փխ* Սպանդարան Պերոժ *(ADEPv. արդեօ՞ք v²-ի ընթերցումից վերականգնելի է՝* Սպանդարան-**ե** Պերոժ, *թէ՞ այդ տարընթերցումը յաջորդ՝* Որմզդ-**ե** Պերոժ *անուան հետ զոյգերով ինքնաթելադրութիւնից է)*

22 *DPv* Որմզդպերոժ, *v²* Որմզդէպերոժ *փխ* Որմզդ-ե Պերոժ *(AE)*

23 *AEv²* Ալաւան *փխ* Ալեւան *(DPvv*$_{in}$*)*

24 *AE* է *փխ* առ *(DPv)*

25 *AE* ի *փխ* ընդ *(DPv)*

26 *A* Եւ ունի *(DEPv)*

27 *ADEPv* եւթն *փխ* ութն *(վեր., տե՛ս* **եւթն** → **ութն***. v-ի տողատակի յայտնի ծնթ-նն է.* «Ամենայն օրինակք եւթն ասեն եւ թուեն ութ. գուցէ զ*Ուտի առանձնակ* ոչ ի կարգէ առաջնոցն համարեալ»*)*

***Արանռոտ[1], Տռի[2], Ռոտ Պայեակ[3], Աղուէ, Տուչքատակ[4], Գարդման, Շակաշէն[5], Ուտի Առանձնակ՝ յորում Պարտաւ քաղաք:*** 167 ***Լինի ի[6] նմա ձիթենի, վարընկենի[7] եւ յասմիկ, եւ[8] ի[9] հաւուց՝ կատակ:*** 168 ***[Զայս ամենայն Աղուանք ունին՝ հանեալ ի Հայոց]][10]:***

[27ա] 169 ***ԺԳ.[11]՝ Գուգարք՝ ի մտից Ուտիաց-[ւ]ոց[12]:*** 170 ***Ունի գաւառս ինն[13]. զՁորոփոր, զԿողբափոր, զԾոբափոր[14], զՏաշիր, զԹռեղս, զԿանգարս[15], զՋաւ^կախս[16] Վերի, զԱրտահան[17], զԿ^ալարճս[18]:*** 171 ***Լի[19]՝ անալուծ եւ հա՛ճար[20] ծառ, եւ սորովիլ եւ տաւսախ:*** 172 ***Ունին արդ Վիրք՝ հանեալ ի Հա[յ]ոց:***

173 ***ԺԴ.[21]՝ Տայք [առ Եգերբ կայ[22]՝ ամրոցաւք եւ բերդաւք կառուցեալ][23]:*** 174 ***Ունի***

---

1 *AE* Արանռովտ *փխ* Արանռոտ (*DPv. Աղուանքի գլխում* (*նախ. Ե.109*) Ասռոտ *եւ* Արաասռոտ *էր)*

2 $v^2$ Տառի *փխ* Տռի *(ADEPv)*

3 *AE* Ռոտպտակ, *DPv* Ռոտ Պացեան, $v^2$ Ռովտապայակ *փխ* Ռոտ Պայեակ *(վեր.՝ ըստ նախորդի՝ Աղուանքի գլխի. տե՛ս նախ. Ե.109. Pv-ի համար հմմտ. ուշ երկաթագիր* **Յ → Ց** *եւ* **Կ → Ն***)*

4 *AE* Աղաւե, Տուչկատակ, $v^2$ Աղաւէր, Ուշանատակ *փխ* Աղուէ, Տուչքատակ *(DPv. վերեւում կային նաեւ* Ազուէ, Ջաւէ *եւ* Թուչքատակ, Թուկքատակ *ընթերցումները, տե՛ս նախ. Ե.109)*

5 *DPv* Ծիկաշէն *փխ* Ծակաշէն *(AEv². Ծիկաշէն ընթերցում կայ նաեւ վերեւում, տե՛ս նախ. Ե.109)*

6 *AE* Եւ լինի *փխ* Լինի ի *(DPv)*

7 *AE* վարանդենի, $v^1$ վարդենի *փխ* վարընկենի *(DPv)*

8 *DPv չիք* յասմիկ եւ *(AEv². տե՛ս* **եւ … եւ***)*

9 *AE չիք* ի *(DPv)*

10 *ADEPv չիք* Զայս ամենայն … Հայոց *(2 տող) (պայմանական վեր.՝ ըստ Արցախի գլխի նախ. Ե.161-ի. հէնց այս գլխաւարտն էլ առիթ է տուել V-ի գրչին՝ վրիպելու 2 գլուխ, տե՛ս* **ունին՝ հանեալ ի Հայոց … ունին՝ հանեալ ի Հայոց**. *հմմտ. Յակոբեան, 2009, էջ 219) / V չիք* ԺԱ. Փայտակարան … Հայոց *(18 տող) (վեր.՝ ըստ համառօտի. Սուքրեանի ծնթ.-ն է՝* «Պակասին յՕրինակիս Փայտակարան ու Ուտի աշխարհք, զորս մուծաք ըստ այլ օրինակաց եւ վաղ տպագրելոց»*) / Արտագրելով նախորդող Արցախի գլխի նոյնանման* «…հանեալ ի Հայոց» *գլխաւարտը եւ լուսանցքում գրելով յաջորդ՝* ԺԱ *գլխահամարը՝ V-ի գրիչն իր ծանր անփութութեամբ սկսել է ընդօրինակել ոչ թէ Փայտակարանի եւ Ուտիքի գլուխները (այդպէս՝ վրիպուած-կորսուած) կամ գոնէ՝ Գուգարքի ու Տայքի, այլ՝ դրանց յաջորդող* ***Այրարատինը****, որն, ըստ երեւոյթին, տեսել էր նախագաղափարի աջ թերթին. մի պահ նա նկատել է նախագաղափարի ձախ երեսին իր վրիպած 2՝ Գուգարքի ու Տայքի գլուխները, եւ հանելով աջ էջի աւարտին՝ թերթը շրջելու փոխարէն ընդմիջել է Այրարատի գլխի արտագրումը* («զինքն զԱրագած»*-ով) եւ ընդօրինակել այդ գլուխները (հերթական* ԺԲ *եւ* ԺԳ *գլխահամարների տակ), ապա նոր վերադարձել ընդմիջուած Այրարատին* («եւ է ըստ յելից Նիգ…», *տե՛ս նախ. 178-ի ծնթ.). Սուքրեանը չի ծնթ-գրել այս ամենը եւ լոկ ամբողջացրել է Այրարատի գլուխը* ***Գուգարքից առաջ*** *ու* ***իր*** *հերթական՝* ԺԳ. *գլխահամարի տակ. V-ի* Գուգարք *բառի կողքի լուսանցքում ուշ ձեռագրով նշում է արուած՝* «թռ/իչք»

11 *V* ԺԲ, *S* ԺԴ. *փխ* ԺԳ. *(վեր.՝ ըստ համառօտի. V-ի այս տողի վերեւում կայ ուշ ձեռագրով կայծակնաձեւ նշան եւ «ծանօթագրում»՝* «շաքի Է. ալանք շարվան շամախի Է որ են սկիւթաց/իք:»*)*

12 *Համառօտում* Ուտիոյ *է՝ փխն.* Ուտիաց[ւ]ոց, *իսկ նախորդ գլխում (նախ. Ե.165)* Ուտի *էր*

13 *V* Թ

14 *Վերեւում (նախ. Ե.99)* Ծո**փո**փոր *էր. համառ-ում այլ դասաւորութեամբ է՝* «Ծոբ**ո**փոր, Կողբ**ո**փոր»

15 *VS* զԿանկարս *փխ* զԿանգարս *(վեր.՝ ըստ համառօտի, որտեղ* Կանգարք *է. տե՛ս բարբառային* **Գ → Կ → Գ**. *հմմտ. նաեւ վերեւում, Վիրքի գլխում, որտեղ V-ում* Գանկարքա[յ] *է)*

16 *V* զՋօվախս, *S* զՋովախս *փխ* զՋաւ^կախս *(վեր.՝ ըստ համառօտի. ըստ երեւոյթին, գրելով* զ**Ջօ**՝ *V-ի գրիչն անհանգստացել է, թէ ընթերցողը* **Ջո**ախք *կ՚ընկալի, ուստի՝ յաւելել է իր* **վ**-*ն. Սուքրեանի տողատակի վրիպեալ ծանօթագրութիւնն է.* «Յօր. *Ջովախնավերի*»*)*

17 *V* զԱրտաջան *փխ* զԱրտահան *(վեր. Սուքրեանի՝ ըստ այլոց եւ համառօտի, ուր* «Արտահանք, Ջաւախք, Կղարջք (*AE* Ջավախք, Կաղարջք)» *է.* **ջ**-*ի համար տե՛ս* զԱրտաջան – զԿ^ալարճս*)*

18 *V* զԿալարճս, *S* զԿալարջս *փխ* զԿ^ալարճս *(վեր.՝ ըստ նախորդի եւ յաջորդի, տե՛ս նախ. Ե.96, 176)*

19 *S* Լինի *փխ* Լի *(V)*

20 *V* հօճար *փխ* հաճար *(վեր. Սուքրեանի՝ ըստ համառօտի. DPv-ում* հաճարածառ *է)*

21 *V* ԺԳ *S* ԺԵ. *փխ* ԺԴ. *(վեր.՝ ըստ համառօտի)*

22 *DPv* երի կայ Գուգարաց *փխ* Եգերբ կայ *(AE. հմմտ. վերեւում, նախ. Ե.115)*

23 *VS չիք* առ Եգերբ … կառուցեալ *(1 տող) (վեր. Երեմեանի՝ ըստ համառօտի, արդեօ՞ք նախագաղափարը* **-ք** *էլ է ունեցել, որից եւ ծագել է գրչի վրիպումը՝* **Տայք** … կառուցե**ալք***)*

*գաւառս ութ*[1]*. զԿող՝ յելից*[2] *կուսէ, յորմէ բ[ղ]խեն*[3] *աղբիւրք գետոյն Կուրայ՝ ի գեղջէն, որ ասի Կրիակունք, եւ ի մուտս կոյս ըստ երկայնանիստ գաւառին գնա[յ] եւ դառնա[յ] առ հիւսի՛սի*[4] *ընդ Արտահան, իջանէ ընդ Սամցխէ եւ ապա դառնա[յ] յելս՝ մինչ ի Կասբից*[5] *ծովն:* 175 *Իսկ ըստ մտից Կողա[յ]՝ Բերդաց*[27բ]*փոր, Պարտիզացփոր, Ճակատք, յելս եւ ըստ հարաւո[յ]՝ Բուխա[յ] եւ [Ոքաղէ եւ]*[6] *Ազորդացփոր՝ իւրեանց գետակաւք, որք յիրար անկեալ*[7] *իջանեն ի Յոհ:* 176 *Որոց ըստ մտից՝ Արսեացփոր առ Պարխար լերամբն, ընդ որ իջանէ Յոհ, գալով*[8] *ի Սպերա[յ], անցանէ առ Թ[ո]ւխարս բերդով*[9] *ի Կլարճս, եւ անտի յեգր՝ ընդ Նիգալ, ընդ Մրուղ եւ ընդ Մրիտ գաւառս՝ ի Պոնտոս ծով, զոր Եգերացիք կոչեն Ակամսիս, եւ Խաղտիք*[10]*՝ Կակամար:* 177 *Լինի ի նմա ծուզ, նուռն թ*ᵘ*թու, աղտոր, սորովիլ, պալախունկ եւ նշաւշ:*

[26բ] 178 ***Ժե.***[11] ***Աշխարհ՝ Այրա՛րատ***[12]*, ի մէջ կալով նախասացեալ աշխարհացդ՝ ունի գաւառս քսան [եւ մի]*[13]*. ըստ Բարձր Հա[յ]ոց՝ զԲա*ᵍ*սեն*[14]*, ընդ որ անցանէ Երասխ՝ գետացեալ ի Մուրցամաւր գետո[յ], որ բաժանէ զԳաբեղեանս*[15] *ի հարաւ, եւ զԱբեղեանս եւ զՀաւունիս՝ ի հիւսիսի, գնալով ընդ մէջ Արշարունեաց, որո[յ]*[16] *Բագրեւանդս*[17]*, Ծաղկունի*[18]*՝ ի հարաւո[յ], եւ Վանանդ եւ [Աշոցք եւ]*[19] *Շիրակ՝ ի հիւսի՛սի*[20]*. յորոց եկեալ գետն Ախուրէն՝ հանդերձ Մեծագետովն, անցանելով յելից կուսէ* [27ա] *Մաւրիկոպաւլսի, այսինքն՝ Շիրակաշատ ա[ւա]նի*[21]*, եւ Մրենո[յ] եւ*

---

1 *V* ը̅

2 *V* յէլից *փխ* յելից *(վեր. Սուքրեանի՝ ըստ այլոց)*

3 *VS* բխեն *փխ* բ[ղ]խեն *(վեր. Երեմեանի՝ ըստ այլոց. տե՛ս, օր.՝ նախ. Դ.23, Ե.78, 119, 133, 206 եւն)*

4 *VS* հիւսիւսի *փխ* հիւսիսի *(վեր.՝ ըստ այլոց)*

5 *VS* Կազբից *փխ* Կասբից *(վեր.՝ ըստ այլոց, օր.՝ նախ. Ա.30, 31, Բ.21, Ե.69, 80, 251 եւն)*

6 *VS չիք* Ոքաղէ եւ *(վեր. Երեմեանի՝ ըստ համառօտի, ուր գաւառախումբն է՝* «զՃակս, զԲուխա (*AE* զՃակատաս, զԲոխա), զՈքաղէ, զԱզորդափոր (*DPv* զԱզորդ, զԿափոր)». *տե՛ս* **եւ ... եւ***)*

7 *VS* անգեալ *փխ* անկեալ *(վեր.՝ ըստ յաջորդի, տե՛ս նախ. Ե.307)*

8 *V* գոգով *փխ* գալով *(վեր. Սուքրեանի՝ ըստ այլոց. տե՛ս բոլորագիր* **ալ** → **ոգ**. *Սուքրեանի ծնթ-նն է.* «Յօր. *Գոգով*»*)*

9 *V* Թւխարս բերթով *փխ* Թուխարս բերդով *(վեր. Սուքրեանի՝ ըստ այլոց. տե՛ս բանաւոր* **Դ** → **Թ***)*

10 *V* Խաշտիք *փխ* Խաղտիք *(վեր. Սուքրեանի. տե՛ս բոլորագիր* **ղ** → **զ**. *Կողքիսի գլխում* Խազտիք *էր)*

11 *V* ժ̅ա̅, *S* ԺԳ. *փխ* ԺԵ. *(վեր.՝ ըստ համառօտի. V-ի գրիչն Այրարատի գլխի սկիզբն ընդօրինակել է* Գուգարք *եւ* Տայք *գլուխներից առաջ, իսկ աւարտը՝ դրանցից յետոյ, հմմտ. նախ. 168-ի ծնթ.)*

12 *V* Այրայրատ *փխ* Այրարատ *(վեր. Սուքրեանի. նոյն վրիպումը կայ նաեւ նախորդի՝ նախ. Ե.157. տողի կողքի լուսանցքում ուշ ձեռացագրով, երկար պատուոյ նշանների մէջ ծանօթագրուած է 3 տող.* «Աշխարհ երև/անայ / է», *առաջին բառն՝ ալիքաձեւ գաղափարագիր՝ պատուոյ նշանի տակ)*

13 *V* ծ̅զ̅, *S* վեշտասան, *ADEPv* քսան *փխ* քսան [եւ մի] *(վեր.՝ համարելով, որ համառօտի խմբագիրը բաց է թողել սկզբնօրինակի «մի» կամ «ա̅» բառը՝ ընկալելով իբրեւ գաւառաթուարկման մուտք* («եւ ա̅՝ ... զԲասեն»), *որը չէր շարունակւում* («բ̅՝ զԳաբեղեանս» *եւն). իսկ V-ի վրիպեալ «ծ̅զ̅» թիւը, գուցէ, գալիս է մեր գրչի տեսած՝ նախագաղափարի աջ էջում առկայ Այրարատի գլխի առաջին կէսի* (*հմմտ. նախ. Ե.168-ի ծնթ.*) *գաւառանուների սեփական հաշուարկից. ճիշտ է՝ այդ դէպքում ստացւում է, որ Այրարատը կիսելը ոչ թէ մեր գրչի, այլ նրա նախագաղափարի վրիպումն էր* (*որ բացառուած չէ*)*. մեզ հասած այդ կէսի գաւառաթիւն էլ 16 չէ, այլ 11* (*բայց մեր գրիչն էլ կարող էր պարզ սխալով հաշուել*)*. ըստ Երեմեանի եւ Hewsen-ի՝ վեր-նելի է* «քսան [եւ **երկու**]», *գաւառ համարելով նաեւ* Ծարուր դաշտ-*ը)*

14 *VS* զԲագսեն, *ADEPv* Բասեան *փխ* զԲաᵍսեն *(վեր.)*

15 *V* զԳաբելեանս *փխ* զԳաբեղեանս *(վեր. Սուքրեանի՝ ըստ համառօտի. յաջորդը՝* զԱբեղեանս*)*

16 *V* որո, *S* որոց *փխ* որո[յ] *(վեր., այս եւ նախորդ բառի վերեւում ուշ ձեռացագրով դրուած է կայծակնաձեւ նշան եւ «ծանօթագրուած» է 4 բառ.* «աթախ. հէնի. դէրջան. բէլու:»*)*

17 *S* Բագրեւանդ եւ *փխ* Բագրեւանդս *(V)*

18 *Սուքր. ծնթ-ը՝* «Որ է *Ծաղկոտն*». *հմմտ. նախ. 179*

19 *VS չիք* Աշոցք եւ *(վեր.՝ ըստ համառ.* (*տե՛ս* **եւ ... եւ**), *ուր գաւառադասաւորութիւնն այլ է՝* «Հաւունիք (*DPv* Վահաւունիք, *v*² Վահագունիք), Արշարունիք (*v*² Աշարունիք), Բագրեւանդ (*AE* Բագրաւանդ), Ծաղկոտն, Շիրակ, Վանանդ, Արագածոտն (*AE չիք* Շիրակ ... Արագածոտն, *տե՛ս* **...ոտն ... ...ոտն**), Ճակատք, Մասեացոտն, Կոգովիտ (*AE* Կոգայաւիտ), Աշոցք (*AE* Աշոց), Նիգ»*)*

20 *V* հիւսիւսի *փխ* հիւսիսի *(վեր. Սուքրեանի)*

21 *V* անի *փխ* ա[ւա]նի *(վեր. Սուքրեանի)*

*Երու[ա]նդաշատ*[1] *քաղաք[ա]գեղի*[2]` *իջանէ յԵրասխ։* 179 *Եւ Արած[ա]նի*[3] *զսկիզբն ունի ի Ծաղկոտնէ, ի տեղ[ւ]ոջէն*[4], *որ կոչի Ոսկիք, եւ գնալով ընդ հիւսի՛սի*[5], *պատելո[վ] զՆ՟պատական*[6] *լերամբն առ Բագ[ա]ւան*[7] *գեղ[ւ]ոջն*[8]` *խառնի ի Բագրեւան գետ։* 180 *Եւ Երասխ թողլով զԱրմաւիր*[9] *քաղաք ի հիւսի՛սի*[10] *եւ զԱրագածոտ[ն]*[11], *յորմէ բղխեն աղբիւրք Մեծամաւր գետո[յ], եւ զԻնքն զԱրագած*[12], [27բ] *եւ է ըստ ելից*[13] *Նիգ, յորմէ բղխեն աղբիւրք Քասախ*[14] *գետո[յ],* ***[Թողու ի Հարաւոյ զՃակատս եւ զՄասեացոտն գաւառ. եւ ըստ ելից Որկով***[՞] ***գետոյ]***[15] *զԻնքն իս[կ]*[16] *լե՟ռնագագաթ*[17] *Մասիս ի հարաւ թողու Երասխ, որո[յ]*[18] *թիկանց տարածեալ` Կոգովիտ գաւառ։* 181 *Եւ անցանէ յԵրասխ*[19] *յելից կուսէ Վաղարշապատ քաղաքի, յորում` մայր եկեղեցեաց Կաթողիկէ*[20] *եւ մարտիրոսուհ[ե]ացն*[21] *մատրունքն, յորոց յելից բղխեն աղբիւրք Ասպահեն գետո[յ], որ է Խաւզմաւր*[22], *եւ խառնի ի Մեծամաւր։* 182 ***[Եւ ապա յելից նորա են գաւառք Մազազ եւ Կոտայք եւ Վարաժնունիք, ընդ որոց հոսի գետն Հուրազդան` բղխեալ ի ծովէ Գեղարքունւոյ***[՞]***, եւ խառնի ի Մեծամաւր]***[23]*։* 183 *Եւ ապա յելից նորա` գետն Ազատ*[24], *եւ արդարեւ` ազատ, որո[յ] ակունքն բ[ղ]-*

---

1 *V* Երունդաշատ *փխ* Երուանդաշատ *(վեր. Սուքր.)*

2 *V* թ̅գ̅ի″, *S* քաղաքի *փխ* քաղաք[ա]գեղի *(վեր.` ընկալելով* **թ̅**-*ն իբրեւ «քաղաք» գաղափարագիր, եւ* **գ̅ի**-*ն իբրեւ սեռ. «գեղի»* (*ուղղ.`* գեւղ), *որի կանոնաւորն է`* գեղջ, *բայց տե՛ս 4 տող անց`* գեղ[ւ]ոջն (*եւ Ե.94, 105, 106`* գեղաքաղաք)` *փխն.* *գեւղջ. *կրկնաբութերով, գուցէ, նշուել է կապող* **ա**-*ն)*

3 *V* Արածնի *փխ* Արածանի *(վեր. Սուքրեանի` ըստ այլոց, տե՛ս նախ. Ե.126, 135, 140, 220 եւն)*

4 *V* տեղոջէն *փխ* տեղ[ւ]ոջէն *(վեր. Սուքրեանի` ըստ այլոց, տե՛ս նախ. Բ.30, Գ.54, Ե.324)*

5 *VS* հիւսիւսի *փխ* հիւսիսի *(վեր.` ըստ այլոց)*

6 *V* պատելօ″ զՆապատական *փխ* պատելով զՆպատական *(վեր. Սուքրեանի)*

7 *VS* Բագւան *փխ* Բագ[ա]ւան *(վեր., գուցէ եւ` վերլի է այլուր չհանդիպող* Բագ[ո]ւան *տարբերակ)*

8 *V* գեղոջն *փխ* գեղ[ւ]ոջն *(վեր. Սուքրեանի` ըստ այլոց, տե՛ս նախ. Բ.30, Գ.54, Ե.324)*

9 *V* զԱրմաբիր *փխ* զԱրմաւիր *(վեր. Սուքրեանի. տե՛ս ուշ երկաթագիր* ***Ւ → Բ****)*

10 *VS* հիւսիւսի *փխ* հիւսիսի *(վեր.` ըստ այլոց)*

11 *V* զԱրագածոտ *փխ* զԱրագածոտն *(վեր. Սուքրեանի` ըստ համառօտի. հմմտ. այլուր`* **-ոտն***)*

12 *Այստեղ է V-ի գրիչը դադարեցրել Այրարատ գլխի արտագրումը եւ սկսել ընդօրինակել վերը բաց թողած Գուգարքի ու Տայքի գլուխները (հմմտ. նախ. Ե.168-ի ծնթ.). Տայքի աւարտին յաջորդող բնագիրը փոքրատառերով է եւ առանց որեւէ նշման* («Ն նշօ″շ. Ն Է. ըստ ելից Նիգ»)*. բաժանման տեղում լոկ մի ուշ (թերեւս` ԺԹ դարի), կապոյտ մատիտով գիծ է քաշուած. Սուքրեանն այս ամենը, ցաւօք, չի ծանօթագրել*

13 *S* յելից *փխ* ելից *(V. տե՛ս նախ. Ե.124 եւ 174-ի ծնթ.)*

14 *V* Քարախ, *S* Քարսախ *փխ* Քասախ *(վեր., այս բառի* **ր**-*ի վերեւում ու ներքեւում ուշ ձեռագրով դրուած են կայծակնաձեւ նշաններ եւ վերեւինի կողքին տրուած է սրբագրում`* **սա**, *իսկ* **ք**-*ի վերեւում նոյն ձեռքը նկարել է կէտախաչանշան եւ լուսանցքում նոյնպիսի «աստղանիշի» կողքին 2 տողով «ծանօթագրել».* «կարբոյ / ջուրն է»*)*

15 *VS չիք* թողու ի հարաւոյ ... գետոյ *(2 տող) (պայմանական վեր.` ըստ համառօտի պահպանած գաւառանունների* (*տե՛ս նախ. Ե.178-ի ծնթ.*) *եւ յարող կտորների. տե՛ս* **գետոյ ... գետոյ**. Որկով *գետանունը զուտ վարկածային է)*

16 *V* իս *փխ* իսկ *(վեր. Սուքրեանի)*

17 *VS* լեառնագագաթ *փխ* լե՟ռնագագաթ *(վեր.` ըստ այլոց. տե՛ս Բ.9, 24, 29, Գ.58, Դ.23, Ե.78 եւն)*

18 *S* յորոյ *փխ* որո[յ] *(V)*

19 *V* յԵրասխ *փխ* Երասխ *(վեր. Սուքրեանի` ըստ բազմաթիւ այլոց)*

20 *V* կաթօղիկէ *փխ* Կաթողիկէ *(վեր. Սուքրեանի. հմմտ. բանաւոր* **Ո ... Օ**. *համառօտում այս նշման պճնազարդ տարբերակը տարուած է գլխի վերջ`* «եւ զմայր եկեղեցեացն ի թագաւորաբնակ եւ յարքայանիստ Վաղարշապատ քաղաքի»*)*

21 *V* մարտիրոսուհացն *փխ* մարտիրոսուհ[ե]ացն *(վեր. Սուքրեանի` ըստ այլոց. օր.` 2 բառ առաջ կայ* եկեղեցեաց*)*

22 *Սուքրեանի տողատակն է.* «Գետս այս երկանուն ոչ միայն ոչ յիշի այլուր, այլ եւ չերեւի իսկ արդ, բայց եթէ աննշան վտակ մի իցէ Մեծամօրի»

23 *VS չիք* Եւ ապա յելից ... ի Մեծամաւր *(4 տող) (պայմանական վեր.` ըստ համառօտի, որի գաւառների թուարկումն է`* «Նիգ, Կոտայք, Մազազ, Վարաժնունիք (*AE* Մաղաղ, Վարժնունիք), Ոստանն Դունայ (*DPv* Դընայ)», *եւ յարող նախադասութիւնների. տե՛ս* **ի Մեծամաւր ... ի Մեծամաւր**. *ի դէպ, համառօտը չունի յաջորդող* Ուրծաձոր *եւ* Արածոյ կողմն *գաւառները)*

24 *Սկզբնատառ* **ա**-*ի վրայ ուշ ձեռագրով նկարուած է կէտախաչանշան եւ լուսանցքում նոյնպիսի նշանի տակ 2 տողով «ծանօթագրուած» է.* «գառնու / ջուրն է»

*խեն[1] ի Գեաւղ լե՞ռնէ[2], ի Սախուրա*[28ա]*կ տեղ[ւ]ոյ[3], որ իջանելով ընդ Դ[ո]ւին[4]՝ արբուցանէ զամենայն Ոստանն Հայոց, եւ անցեալ ընդ հարաւ՝ անկանի[5] յԵրասխ։* 184 *Յորոց ի մէջ շինեալ է Արտաշատ[6] քաղաք, ուր առաջին[7] ժամանակսն՝ խառնուրդք Մեծամաւրի, իսկ այժմն փոխեալ զգնացսն Մեծամաւրա[յ]՝ խառնի ի մտից կուսէ։* 185 *Իսկ յելից կուսէ Դ[ո]ւնա[յ][8] են գաւառք Ուրծաձոր եւ Արածո[յ] կողմն՝ ընդ մէջ կալով Վա[յ]ո[յ][9] Ձորո[յ] եւ Շարուր դաշտի, ընդ որ հոսի գետն Արփաւնկն[10]՝ առ Մար[ա]ւ[ա]նա[յ][11] քաղաքով, անցանելով ի հարաւ՝ խառնի յԵրասխ։* 186 ***[Եւ ունի Այրարատ լերինս[12], գետս եւ դաշտս պիտանիս, եւ երես եւ հաւս[13], եւ զամենայն պարարտութիւն, եւ զծովակն Գայլատու[14] եւ [զմայր գետոց՝ զԵրասխ[՞]]**[15]*։* 187 *Լինի որդն սիզա[յ]՝ բր[ե]ալ[16] յարմատո[յ]՝ առ ի զարդ կարմրութեանն[17]։*

188 Յաղագս Ասոր[ւ]ոց[18]

189 *[ԻԸ.] Աշխարհ ընդհանուր[19] Ասիո[յ]՝ Ասորիք, յելից կալով իւրեանց ծովուն հոմանուն պեղագոսին[20], առեալ ի Սիսոնէ[21] քաղաքէ եւ Կիլիկ[ի]ա[յ][22] դրանցն՝ մինչեւ ցԹռասիա գետամտունս, զոր կոչեն եւ Քոռսէաս, եւ անտի[23] ցԻպպոս լեառն ըստ հարաւո[յ]։* 190 *Եւ սահմանի Հրէաստանիւ եւ մասամբ ինչ առ Ապառաժ[24] Ա-*

1 *VS* բխեն *փխ* բ[ղ]խեն *(վեր.՝ ըստ այլոց, օր.՝ նախ. Դ.23, Ե.78, 119, 133, 206 եւն)*

2 *VS* լեառնէ *փխ* լե՞ռնէ *(վեր.՝ ըստ այլոց, օր.՝ նախ. Բ.9, 24, 29, Գ.58, Դ.23, Ե.78 եւն)*

3 *VS* տեղոյ *փխ* տեղ[ւ]ոյ *(վեր.՝ ըստ այլոց, տե՛ս նախ. Բ.30, Գ.54, Ե.324)*

4 *V* Դուին *փխ* Դ[ո]ւին *(վեր. Սուքրեանի)*

5 *VS* անգանի *փխ* անկանի *(վեր. Սուքրեանի՝ ըստ այլոց, օր.՝ նախ. Ե.58, 307)*

6 *Սկզբնատառ* **ա**-*ի վերեւում ուշ ձեռացագրով կայծակնաձեւ նշան է դրուած եւ «ծանօթագրուած»՝* «վիրապն է»

7 *S* յառաջին *փխ* առաջին *(V)*

8 *V* Դունա *փխ* Դ[ո]ւնա[յ] *(վեր. Սուքրեանի)*

9 *V* հառ, *S* Վայոց *փխ* Վա[յ]ո[յ] *(վեր., տե՛ս ուշ երկաթագիր* **Վ** → **Հ**. *Սինիքի գլխում V-ն ունէր՝* զմայլո[յ] ձոր*)*

10 *VS* Արտօնկն *փխ* Արփաւնկն *(վեր., տե՛ս բոլորագիր* **փ** → **տ**. *գուցէ՝ սկզբնօրինակի համար վերականգնելի է* Արփաւն[ա]կն *կամ* Արփաւն[ա]կ[ա]ն. *ըստ Երեմեանի՝* Արփանեալն*)*

11 *VS* Մարւնա *փխ* Մար[ա]ւ[ա]նա[յ] *(վեր. Երեմեանի. նոյնանում է Վասպուրականի գլխի վերջում լոկ համառօտի պահպանած* Մարմարան**քն**, Մարմանղ**քն**, Մարմար**սն**, Մարման**ոք**, Մարմանտ**ոք**, Մարանդ *խաթարուած ձեւերից վերականգնուող* Մար[աւ]ան [**ք**աղա]**ք**ն-*ի հետ, ինչպէս նաեւ՝ Խորենացու Ա.լ գլխի* Մարա**կերտ**-*ի եւ Ստրաբոնի XI, 14, 6 գլխի* *Մարա**շատ**-*ի* (Ἄρξατα < *[Μ]άρ[α]ξατα). *հմմտ. Յակոբեան, 2009, էջ 231-232)*

12 *AE* լերունս *փխ* լերինս *(DPv)*

13 *DPv* դաշտս, *v²* դաշտս եւ գետս պիտանիս, երեւ եւ հաւս *փխ* գետս եւ ... եւ հաւս *(AE)*

14 *DPv* ծովակն Գայլատոյ *փխ* զծովակն Գայլատու *(AE)*

15 *ADEPv չիք* զմայր գետոց՝ զԵրասխ *(զուտ վարկածային վեր.՝ ենթադրելով որ հէնց վերջին գետանունն է պատճառ եղել V-ի գրչի համար՝ վրիպելու ողջ նախադասութիւնը, տե՛ս* յ**Երասխ** ... զ**Երասխ***)* / *VS չիք* Եւ ունի Այրարատ ... Երասխ *(4 տող) (վեր. ըստ Երեմեանի՝ համառօտից, ուր չկայ միայն մեր վարկածային կտորը)*

16 *V* սիզա/րբալ *[տողամիջակայքում]*, *SAEvₜₒ* սիզաբերեալ, *Pv* սիզոյ *փխ* սիզա[յ]՝ բր[ե]ալ *(վեր., տե՛ս* **բր** → **րբ**. *քանի որ* սէզ-*ի կանոնաւոր սեռականը* սիզ**ո**յ *է, ուստի՝* «որդն սիզ**ա**յ» *ձեւով հեղինակը, թերեւս, ոճաւորել է առանձին մեզ չհասած* *սիզ**ա**որդն *եզրոյթը. համառօտում բնագիրն աղճատուել է՝* «որդն սիզաբերեալ յարմատոյ» *եւ* «որդն յարմատոյ սիզոյ». *Սուքրեանը լոկ ծանօթագրել է.* «Յօր. *Սիզարբալ*»*)*

17 *S* կարմրութեան *փխ* կարմրութեանն *(V. համառօտում լրացուած է՝* «կարմրութեան (*AE* կարմրութեանս) գունոյ*)*

18 *VS* Ասորոց *փխ* Ասոր[ւ]ոց *(վեր.՝ ըստ այլոց, տե՛ս նախ. Բ.30, Գ.54, Ե.324. այս տողը V-ում էլ է առանձին տողով, կարմրով եւ բառերի վրայ եռաբութերով՝ հէնց խորագրի պէս. լուսանցքում գլխահամար չկայ, ըստ նախորդ եւ յաջորդ աշխարհահամարների՝ այն վերականգնում ենք* ([ԻԸ.], *S-ում՝* ԻԳ.) *յաջորդ տողում)*

19 *V* ընթհանուր *փխ* ընդհանուր *(վեր. Սուքրեանի, տե՛ս բարբառային* **Դ** → **Թ***)*

20 *VS* պելագոսին *փխ* պեղագոսին *(վեր.)*

21 *Սուքրեանը ծանօթագրել է.* «Որ է Իսսոս մերձ յԱղեքսանդրեդդա ի Կիւլիկեան ծովածոցի»

22 *V* Կիլիկա, *S* Կիլիկեայ *փխ* Կիլիկ[ի]ա[յ] *(վեր.՝ ըստ յաջորդի, տե՛ս նախ. Ե.190)*

23 *V* անդի *փխ* անտի *(վեր. Սուք.՝ ըստ Ա.27, Ե.69 եւն)*

24 *V* Ապարաժ *փխ* Ապառաժ *(վեր. Սուքրեանի՝ ըստ յաջորդների, օր.՝ նախ. Ե.195, 199, 227 եւն)*

*րաբիա[յ][1] մինչեւ ցԱնապատն Արաբիա, մինչեւ ցկրկ[ո]ւածն[2] Եփրատա[յ] յարեւելս կոյս, հանդէպ Թափսակ քաղաքի, եւ գետովն ի* [28բ] *վեր մինչեւ ցԱմանոս[3] լեառն, որ բաժանէ ըստ հիւսի՛սո[յ][4] զԿիլիկէա եւ զԿապադովկիա[5], այսինքն՝ զՓոքր Հայս՝ յԱսոր[ւ]ոց[6], ի Կոմագէնէ աշխարհէ փոքուէ։*

191 *Քանզի ունին Ասորիք[7] փոքր աշխարհս ի-նն[8]. զգրե[ա]լդ[9], յորում՝ քաղաք Շամուշատ, եւ զԿիւռիստիկի[10], յորում՝ քաղաք Հերապոլիս[11], որ է Մաբուն[12]. եւ Բեռիա, որ է Խազազ[13]. [զ]Ք[ա]լ[ի]կիդիկի[14], յորում՝ քաղաք Քալկիսա, որ է Նկորիա, եւ Աւագն Անտիոք[15]՝ իւր զատուցեալ աշխարհաւն, որ կոչի Սե[լե]ւկիա[16]. զԱպամիս, յորում՝ քաղաք Ապամիա, եւ Եպիփանիա[17], որ է Հեմաթ, եւ Եմածա[յ] եւ այլք. զԿասիոտի, յորում՝ Առատող[18] կղզի. զԿիւլիսիւռիա, յորում՝ Դամասկոս քաղաք. զԲադանա[յ]՝ ըստ անապատի. զՊալմի[ր]ունի[19], յորում է Հաւարին քաղաք՝ ըստ Անապատ Արա-բ[ի]ո[յ][20]. եւ զԲալբանիտիս՝ ըստ Եփրատա[յ]։*

192 *Ունին լերինս զՊիեռա[յ], զԿայսիմոն[21], զԼիբանանոս, զԱնտոլիբանանոս[22], որ է Սանիր, զԱսլամոս[23], զԿարմեղոս, եւ գետս անուանիս՝ զՈ-ւէնտիս, որ բղխէ ի Լիբանանէ, անցանելով առ Ե-պիփանով՝ մտանէ ի ծով՝ հուպ յԱւագն Անտի-ոք[24]. եւ Ելեւթռոս, որ ասի Ազատ գետ, եւ նա ե-լանէ ի Լիբանանէ եւ մտանէ [ի][25] ծով՝ մերձ յ*[29ա]*Անդանդոն[26] քաղաք. եւ Ադոնիս, որ եւ նա*

---

1 *VS* Արաբիա *փխ* Արաբիա[յ] *(վեր.՝ սեռականով)*

2 *V* ցկրկուածն, *S* ցկրկնուածն *փխ* ցկրկ[ո]ւածն *(վեր., հմմտ. նախորդիւ, նախ. Գ.20, Ե.112* («մին-չեւ ցնոյն **դարձուածն** Եփրատայ»)*)*

3 *S* ցԱմանուս *փխ* ցԱմանոս *(V)*

4 *V* հիւսիւսո *փխ* հիւսիսո[յ] *(վեր. Սուքրեանի՝ ըստ այլոց)*

5 *V* զԿապատովկիա *փխ* զԿապադովկիա *(վեր. Սուքրեանի՝ ըստ այլոց. տե՛ս նախ. Ե.50, 52, 190)*

6 *VS* յԱսորոց *փխ* յԱսոր[ւ]ոց *(վեր.՝ ըստ այլոց, տե՛ս նախ. Բ.30, Գ.54, Ե.324)*

7 *V-ում ձախ լուսանցքում ուշ ձեռագրով, 2 տողով, երկար պատույ նշանների մէջ «ծանօթա-գրուած» է.* «աշխարհ / ասորոց» *(առաջին բառը գրուած է՝* **ա** *եւ ալիքաձեւ գաղափարագիր)*

8 *V* թ̄

9 *V* զգրեղդ *փխ* զգրեալդ *(վեր. Սուքրեանի, ով նա-եւ տողատակում ծանօթագրել է՝* «Յօր. *զԳրեղդ.* այլ թուի համառօտեալ *զԳրեալդ*, ակնարկելով ի նախագրեալն Կոմագենի, որոյ արդարեւ քաղաք գլխաւոր էր Շամուշատ». *հմմտ. նաեւ գրաւոր* **Լ** *→* **Ղ** *→* **Լ***)*

10 *V* զԿիւռիմտիկի *փխ* զԿիւռիստիկի *(վեր. Սուքրեանի. ըստ Երեմեանի՝* զԿիւռեստիկէ*)*

11 *S* Հերոպոլիս *փխ* Հերապոլիս *(V. վերջին 2 բառերի վերեւում դրուած է օղակաձեւ նշան եւ ձախ լուսանցքում ուշ ձեռագրով, նոյն նշանի եւ մի ոլորազարդի տակ 26 տողով, յաճախակի պատուագրումներով «ծանօթագրուած» է.* «փիլիպոս առաքեալ / առ ծովեզրեայս / շրջեալ առ սահ/մանօ-քն՝ անդ/աքայ ի մըմբէջ / որ է յարապօլ/իս որ կո-չի քաղաք / քահանայից։ պատմ/ագրաց գտաք / Եւ յետ քակել/ոյն ի նեքաւ/ովէ ի մնբէջ / քաղաքի շի-նեցօ / յաթուրաց/ոցն. և եղօ ա/նդ. կուռքն / կանա-նայ և / կոչեցաւ յարայ/պաւլիս / որ թարքմա/նի քահանայից քաղաք / վասն քրմացն / կախարդացն. / աթուրացոց երկիրն / նինուէէ սահմանացն է։»*)*

12 *S* Մաբուկ *փխ* Մաբուն *(V)*

13 *Ըստ Երեմեանի՝ վերականգնելի է* Խա[լիւբոն եւ Ա]զազ *փխն.* Խազազ*)*

14 *V* քլիկիգիկի, *S* Լիկիդիգի *փխ* [զ]Ք[ա]լ[ի]կիդիկի *(վեր. ըստ Սուքրեանի մի դիտարկման* ([զ]-*ն՝ ըստ միւսների), ով չի նկատել* Խազազ-*ին յա-ջորդող* **ք**-*ն, բայց ծանօթագրել է՝* «Քալկիդիգի պիտի». *հմմտ. նաեւ բոլորագիր* **դ** *→* **գ***)*

15 *V* Անդիոք *փխ* Անտիոք *(վեր. Սուքրեանի՝ ըստ նախորդների, օր.՝ նախ. Ա. 29, 33, Ե.22. բայց այս* **դ**-*ով ձեւը կրկնւում է նաեւ յաջորդ նախ. մէջ)*

16 *V* Սեւկրա *փխ* Սելեւկիա *(վեր. Սուքրեանի, որը տողատակում ծանօթագրել է՝* «Յօր. *Սեւկրա*», *տե՛ս* **Սելե...** *եւ ուշ երկաթագիր* ***Ի*** *→* ***Ր****)*

17 *V* Եպրփանիա *փխ* Եպիփանիա *(վեր. Սուքրեա-նի. տե՛ս երկաթագիր* ***Ի*** *→* ***Ր*** *եւ յաջորդ նախ.-ը)*

18 *V* Առատսղ, *S* Առատոզ *փխ* Առատող *(վեր., տե՛ս բոլորագիր* **ո** *→* **ս***)*

19 *V* զՊալմիունի *փխ* զՊալմիրունի *(վեր. Սուքրեա-նի, որը տողատակում ծանօթագրել է՝* «Յօր. *Պալմիունի*», *տե՛ս ուշ երկաթագիր* ***ԻՐ*** *→* ***Ի****)*

20 *V* Արաբո *փխ* Արաբիոյ *(վեր. Սուքրեանի, տե՛ս ուշ երկաթագիր* ***ԲԻ*** *→* ***Բ****)*

21 *S* զԿասիմոն *փխ* զԿայսիմոն *(V. գրիչը* **յ**-*ն տեղա-ւորել է բառի տակ)*

22 *VS* զԱնդոլիբանանոս *փխ* զԱնտոլիբանանոս *(վեր., տե՛ս բարբառային* **Տ** *→* **Դ** *→* **Տ***)*

23 *Ըստ Երեմեանի՝ վերականգնելի է* զԱ[լ]սա[դա]-մոս

24 *V* Անդիոք *փխ* Անտիոք *(վեր. Սուքրեանի՝ ըստ այլոց, օր.՝ նախ. Ա. 29, 33, Ե.22. նոյնն էր եւ նա-խորդ նախադասութեան. մէջ)*

25 *V չիք* ի *(վեր. Սուքրեանի. հմմտ. 4 տող անց եւն)*

26 *Ըստ Երեմեանի՝ վերակ-նելի է* յԱնդա[ռա]դոն

*ելանէ ի Լիբանանէ եւ բաժանէ ընդ մէջ Բիբղոս եւ Բիւռիտոս քաղաքաց եւ իջանէ ի ծով. եւ [Յ]որդանան[1], որ ելեալ ի Պանիադա[յ]՝ մտանէ ի Գալիլիաց[ւ]ոց[2] ծովն, եւ ըստ ն[որ]ա[3] եւս ելեալ՝ երթա[յ] մտանէ յԱսփաղտիտէս ծով[4]:* 193 *Ունի եւ այլ գետս եւ լերինս, որպէս՝ զԴամասկոսին, զԲանաս գետ, որ անցանէ ընդ մէջ քաղաքին, եւ զԲառադա, որ յարեւելից կուսէ անցանէ, զոր Աստուածա[յ]ին գիրն Բանա[յ] եւ Փարփարա[յ] կոչէ, եւ որպէս՝ գետակն, որ բղխէ ի Դափնոս[5] Անտիոքաց[ւ]ոց[6], զորմէ Կաստաղայ առասպելքն յաւդեն:*

194 ***ԻԹ.**[7] Աշխարհ Ասիո[յ] է Հրէաստան՝ յելից կալով Փիւնիկական պեղագոսին, առեալ յարտահանութեանցն Թռէաս գետո[յ], որ առ Կեսարիա[8] Պաղեստինեա[յ], մինչեւ ցԳազաց[ւ]ոց[9] նաւահանգիստն:* 195 *Եւ սահմանի մաս<sup>ե</sup>ամբ[10] ինչ ՚Եգիպտոսիւ[11]՝ ի մտից, իսկ ի հարաւո[յ] եւ յելից՝ Ապառաժիւ, եւ ի հիւսիսո[յ]՝ Ասորաւք[12]:* 196 *Ունի աշխարհ[ս][13] երիս[14]՝ զԳալիլ[ի]ա[15], զՍամարիա, զԻդումիաս, եւ լիճ՝ զՏիբերական ծովակն եւ զԱսփաղտիտէս, որ է Մեռեալ ծովն, եւ գետ՝ զՅորդանան. յերկայն[16] է մասն երեք[17], եւ ի լայնն՝ երկու[18]:* 197 *Ունի մայրաքաղաք զսուրբն Երուսաղէմ, որ խաչաձեւ ունի ի չորից կողմանց զտիեզերս,* [29բ] *եւ ինքն ի մէջ նոցա խորհրդովն իւրով սրբէ զամենեսեան զհաւատացեալսն:* 198 *[Եւ է Հրէաստան քաղցրաբեր եւ[19] պտղալից եւ անուշահոտ, եւ[20] բղխէ զկաթն եւ զմեղր][21]:*

